



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

891.71.092

4-47c

1034

1034

19 NOV 2010

... by ...
... - ...
...
...
...


...
...
...

...
...
...

...
...
...
...
...
...

...
...
...

...
...
...



19 NOV 2010
Հ. ԲՈՒՄԵՆ ԿՐԻՍՏԻՆԻ

47. ԲԻՒՅԻ ՍԻՄԷՕՆ ԶԱՀ-ՆԱԶԱՐԵԱՆՅ

891.71.099

4-478

պ
19/10
1
Woolf

ՄԱՐԴԱՍԻՐՈՒԹԵԱՆ ԵՒ ԱԾԽԱՏԱՆՔԻ
ԱԶՆԻՒ ԶԻՆԻՈՐԸ՝
Ի ԻՐԻՅ ԱԼԷՔՍԵԵՒԻԶ
ՎԵՍԵԼՈՎՍԿԻՅ

(18^{XII}/27 89—1899 թ.թ.)

1002
8090

«Ընդ աստեղոր ի՛նչ կայ սիրուն
Քան զանձկալի Եղբայր անուն:»
Մ. ՊԵՏԿՈՍԵԱՆԵԱՆ.

„Слышишь: новому онъ лѣту
Пѣсно радости поетъ:
Благо всѣмъ, ведущимъ къ свѣту,
Братьямъ, съ братьевъ снявшимъ гнетъ.“
И. С. Ансаконъ.

ԻՐԻՅ ԱԼ. ՎԵՍԵԼՈՎՍԿՈՒ ԼՈՒՍԱՏԻՊ ՊԱՏԿԵՐՈՎ

— (133) —

Տ Պ Ա Ր Ա Ն Զ. Բ Ա Ր Խ Ո Ւ Դ Ա Ր Ե Ա Ն Ի
Մ Ո Ս Կ ՈՒ Ա — 1901.



15.3109

Дозволено Цензурою. С.-Петербургъ, 14 Юня 1900 года.

Типог. Х. Бархударянъ, Москва, Срѣтенка, Мясной пер., д. Баринава.

ՄԱՐԿԱՍԻՐՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱԶՆԻԻ ԶԻՆՈՐ՝

Ի Ի Ր Ի Յ Ա. Լ. Բ. Ս. Է. Ե. Ի. Ի. Զ

ՎԵՍԵԼՈՎՍՎՈՒՆ

— քստ ուղտականի՛

„Твоимъ добромъ—тебѣ челомъ!“

ՀԵՂԻՆԱԿ.

ԿԵՆՍՍԳՐԱԿԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ¹⁾։

Պրոֆեսոր Ալէքսէյ Նիկոլաւիչ և թարգմանչուհի Ալէքսանդրա Ադօլֆովնա Վեսելովսկիների որդի և ահադեմիկոս Ալէքսանդր Նիկոլաւիչ Վեսելովսկու հղբորդի Իւրիյ Ալէքսէւիչ Վեսելովսկին (ռուս) ծնւել է Մոսկւայում 1872 թւի յունիսի 6-ին։ Նախօրօք տանը պատրաստելով՝ 1886 թւին մտնում է Լազարեան ձեմարանի²⁾ Հինգերորդ դասարանը, ուր նրա առանձին հետաքրքրութիւնը գրաւում են՝ պատմութիւնը, աշխարհագրութիւնը, ռուսաց գրականութիւնը, Փրանսերէն լեզուն և մասամբ՝ Հին—կլասսիկ լեզուները, մինչդեռ թւաբանութիւնը, բնագիտութիւնը (Ֆիզիկա) և ուրիշ առարկաները գրեթէ չեն գրաւում նրան։ Իր դասարանական ընկերների օգնութեամբ շատ շուտ սկսեց սովորիլ և սովորեց իսկ հայերէն այբուբէնը և ապա՝ հայերէն բաւականին ազատ կարգալ և բաւարար գրել։

¹⁾ Յյունւար 1900 թ.։

²⁾ Լազարեան ձեմարան Արևելեան լեզւաց (Մոսկւա)։— Թերևս աւելորդ է աւելացնել, որ այստեղ խօսքս Լազարեան ձեմարանի գիմնադրական բաժնի մասին է։

Շուտով նրա առանձին ուշադրութիւնը դրաւում են՝ հայոց գրականութիւնը և պատմութիւնը. նա սկսում է ուսումնասիրել հայ գրականներին՝ օգտւելով Մ. Էմինի և Բ. Պատկանեանի թարգմանութիւններով, գրում է (ռուսերէն) մի քանի ոտանաւորներ՝ նիւթ առնելով հայի անցեալը և ներկան (դոցանից առաջինն է—1887 թւին գրած՝ „Смерть Вардана Мамиконяна“ (Վարդան Մամիկոնեանի մահը) ինքնուրոյն և ցայսօր անտիպ ոտանաւորը: Դեռ աշակերտ եղած ժամանակ՝ 1889 թւին իր ծնողներին հետ գնում է արտասահման, ուր, ի միջի այլոց, այցելում է Մխիթարեանների վանքերը Վենետիկում և Վէննայում: Այդ նոյն՝ 1889 թ-ի 27-ին լեհերէնէն ՝ „Русскія Вѣдомости“ լրագրում լոյս է տեսնում նրա առաջին, այսպէս ասած, աւելի հասուն հեղինակութիւնը՝ ծննդեան վէպիկ— „СОНЪ“ (Երազ):

1890 թւին Իւրիյ Ալէքսէեւիչ Վեսելովսկին աւարտում է (մեղալով) Լազարեան ձեմարանի դիմնադիւան դասընթացը և մտնում է Մոսկւայի համալսարանի պատմական - բանասիրական բաժինը (историко - филологическій факультет), ուր առանձին հետաքրքրութեամբ յաճախում է ռուսաց և արեւմտեան Եւրոպայի գրականութեան, պատմութեան, փիլիսոփայութեան և այլն վերաբերեալ դասախօսութիւնները: Համալսարանում, իր ընտրած բաժնի դասընթացը լսելուց յետոյ, նա մի տարի ևս (1894—95 ուսումնական տարեշրջանը)՝ իբրև ազատ ունկընդիր՝ յաճախում է պրոֆ. Ն. Ի. Ստորոժէնկոյի և իր հօր դասախօսութիւնները՝ ի մտուոյ և մանրագնին ուսումնասիրելու համար արեւմտեան Եւրո-

պայի գրականութիւնը: 1897 թւին ննթարկում է պետական կոմիսիայի (государственная комиссия) քննութեան և աւարտում է համալսարանի դասընթացը՝ արժանանալով առաջին աստիճանի վկայագրի (дипломъ первой степени):

Այդ նոյն՝ 1897 թւին Իւրիյ Ալէքսէեւիչ Վեսելովսկին պսակւում է օրիորդ Մարիա Վասիլէնա Փոմինայի հետ:

Վերջին տարիները Իւրիյ Ալէքսէեւիչ Վեսելովսկին դրեթէ ամբողջապէս նւիրել է գրական աշխատանքին՝ պարապեցնելով իր օրերը մերթ՝ արեւմտեան Եւրոպայի, մերթ՝ հայ գրականութիւններով: 1899 թւին ընտրւած է անդամ հետեւեալ Ընկերութիւնների՝ „Общество Любителей Россійской Словесности“ (Մոսկւայում), „Союзъ Русскихъ Писателей“ (Ս.-Պետերբուրգում), „Нео-Филологическое Общество“ (Ս.-Պետերբուրգում): 1898—99 թւականներին մասնակցել է Լազարեան ձեմարանի նախկին սաների Ընկերութեան կանոնադրութեան վերջնական խմբագրութեան գործին. դոյն Ընկերութեան առաջին նիստում ընտրւած է փոխանորդ-անդամ Վարչութեան (кандидатъ Правленія):

Իւրիյ Ալէքսէեւիչ Վեսելովսկին չորս անգամ եղել է արտասահմանում (առաջին երկու անգամը— մանկութեան օրերում): 1898—99 թւականներին այցելել է Բեռլին և Կոլոսի քաղաքները՝ հրապարակաւ դասախօսելու համար: 1892—95 թւականներին երկու-երեք շաբաթ ապրել է Նոր-Նախիջևանում (Դօն գետի վրա)՝ օգտւելով այդ դէպքից ծանօթանալու համար տեղային նիստ ու կացի հետ, այցի-

լելու կրթական հիմնարկութիւնները — Դպրոցները, Մայր եկեղեցին, Սուրբ Խաչ վանքը և այլն: Կով-կասում մինչ այսօր գեռ չի եղած, թէև այդ երկիրը միշտ մի տեսակ առանձին հետաքրքրութիւն է զարթեցնում նրա մէջ: Վերջերս ամեն տարի մի քանի շաբաթ անց է կացնում Ս.-Պետերբուրգում, ուր նրան զրաւում են զրական գործերը:

Իւրիյ Սլէքսէէիչ Վեսելովսկին անձամբ ծանօթ է մի քանի հայ գործիչների հետ. նա լաւ և մօտուստ ճանաչում է պ.պ. Սմբատ Շահ-Սղեղին, Մինաս Բերբերեանին, Սլէքսանդր Մատուրեանին, Վարդգէս Սուրէնեանցին, Յովհաննէս Յովհաննիսեանցին, Լեօն Մսերեանցին, Խաչատուր Քիւչուկ - Յովհաննիսեանցին և շատ ուրիշներին. նրան՝ գեռ աշակերտի՝ ներկայացրել են Ռաֆայէլ Պատկանեանին Լազարեան ձեմարանում տեղի ունեցած մի համերգի ժամանակ:

Իւրիյ Սլէքսէէիչ Վեսելովսկու մի քանի հեղինակութիւնները՝ „Древнѣйшій періодъ исторіи армянскаго театра“ (հայ թատրոնի պատմութեան հնագոյն շրջանը), „Байронъ на островѣ св. Лазаря“ (Բայրոնը ս. Ղազարի կղզում) իր ժամանակին թարգմանուած են հայերէն. նրա „Прибоѣдовѣ и Армяне“ (Գրիբոեդովը և հայերը) հեղինակութիւնը զրւած է եղել հայերէն („Նոր-Դար»-ի համար) և ապա միայն՝ լոյս է տեսել ռուսերէն թարգմանութեամբ:

Յաճը՝ գլ. «VII»-ում ես կրեմեմ Իւրիյ Սլէքսէէիչ Վեսելովսկու տասնամեայ (18^{XII/27} 89—1899 թ.թ.) հեղինակութիւնների, թարգմանութիւնների և այլն լիակատար ցանկը:

II.

Ս.Մ.Փ.Ո.Փ ԲՆԱԳԻԾԸ. «ՆԱԻԱՏԱՄՔ»-Ը.

„Слышишь: новому онъ лѣту
Пѣсни радости поетъ:
Благо всѣмъ, ведущимъ къ свѣту,
Братьямъ, съ братьевъ снявшимъ гнетъ.“³⁾

И. С. Анановъ.

„Служеніе обществу требуетъ отъ насъ большихъ жертвъ и самопожертвованія“ (հասարակութեան շահերին ծառայելը պահանջում է մեզնից մեծամեծ զոհարերութիւններ և ինքնազոհութիւն) — ասել է Ի. Ս. Ակսակովը: Իւրիյ Սլէքսէէիչ Վեսելովսկու մինչ այս օրւայ՝ տասնամեայ զրական և հասարակական գործունէութիւնը մի կատարեալ մարմնացում էր այդ դաւանանքի:

Յիրաւի: Ինչպէս վերը տեսանք, Լազարեան ձեմարանի նախկին սան՝ Իւրիյ Սլէքսէէիչ Վեսելովսկին

³⁾ «Լսում ես—նոր արշալոյսին նա երգում է ուրախութեան երգը՝ Երանի՜ բողբոջունց, որ առաջնորդում են զէպի լոյս, երանի՜ նոցա, որ իբր եղբայրներ՝ իրենց եղբայրներին ազատեցին ճնշող - մաշեցնող լուծից»:

զեռ աշակերտական նստարանի վրա շարունակ օրեր է նւիրել հայ ազգի դրական և առօրեայ նիստ ու կայն ուսումնասիրելուն և իր ուսումնասիրածը ուսւ ընթերցող հասարակութեան սեպհականութիւնը դարձնելուն: Նոյն սէրը դէպի հայի անցեալը և ներկան արտայայտել է Իւրիյ Ալէքսէեւիչ Վեսելովսկին իր ուսանողութեան օրերով, արտայայտում է այսօր ևս՝ կրկին և կրկին գնելով ուսւ ընթերցող հասարակութեան առջ հայի անցեալին և ներկային վերաբերեալ ընտիր ուսումնասիրութիւններ:

Զարմանալի անդուգութեամբ միացնելով իր մէջ՝ և՛ ինքնուրոյն գրողի, բանաստեղծի, և՛ ընտիր թարգմանչի տաղանդները՝ Իւրիյ Ալէքսէեւիչ Վեսելովսկին, շնորհիւ իր վերին աստիճանի գրաւիչ բարոյական-հասարակական սկզբունքների, հանդիսանում է այսօր՝ իբր մի ազնիւ աշխատաւոր, որը, անտես առնելով մի շարք «կեանքի հարւածներ», հրապուրիչ տրկունութեամբ շարունակում է իր՝ զեռ աշակերտական նստարանի վրա սիրած գործը՝ ուսումնասիրել և պարզաբանել հայ ազգի անցեալ և արդի գրական հարստութիւնը: Կողարեան ձեմարանն իր ամբողջ անցեալում չի ունեցել մի նման տեսակ սան. Իւրիյ Ալ. Վեսելովսկին «~~ուսման էր~~, որ իր զեռ մանկական ուղեգով ըմբռնեց և իրագործեց ձեմարանի հիմնադրի բուն նպատակը՝ «~~ուս~~ և հայ ազգութեան ներքին փոխադարձ յերոյ, փոխադարձ «~~ուսման~~ սիրտը և պաշտպան արարելը արարելը: Եւ ահա այդ «նպատակ»-ն է, որ շարունակ աասը տարի իրագործում-ժողովրդականացնում է Իւրիյ Ալ. Վեսելովսկին իր ազնիւ գրչով ու ազնիւ խօսքով...

«Մէկտեղ յողներք, մէկտեղ ցաններք,
Մէկտեղ թափին մեր քրտինքներ,
Ըզճունձ բարեաց յերկինս հաններք
.....
Ընդ աստեղջը ի՞նչ կայ սիրուն
Քան զանձկալի Եղբայր անունս»

(Մ. ՊԵՏԻԿՍԱՆՆԱՆ)

Ահա ի՞նչ անսակի տարրեր են «~~ղեկեց~~ - ղեկավար հանդիսացել Իւրիյ Ալ. Վեսելովսկուն՝ իր այդ «նպատակ»-ն իրագործելու...

Իւրիյ Ալէքսէեւիչ Վեսելովսկու նմանները միշտ և ամենուրեք գրաւում են բանինաց հասարակութեան լաւագոյն տարրի համակրանքը. մարմնացեալ ազնւութեան այդ ընտիր զինւորներն իրական յոյս, իրական հաւատ են ներշնչում դէպ ապագայի լաւագոյն օրերը: «Ես չեմ կարծում, որ ապագայում որ և է կարիք լինի մեծարելու ինձ նման համեստ անհասաներին. ես համոզւած եմ, այո՛, խորապէս համոզւած եմ, որ ապագայի սերունդների նիստ ու կացի միակ զեկավարը կլինի՝ ճարտասիրութեան և ազգութիւնների Բարոյապէս ճիւղման գաղափարը: Այստեղ միայն ժամանակի հարց է — ուրիշ ոչինչ» — ասաց, ի միջի այլոց, Իւրիյ Ալէքսէեւիչ Վեսելովսկին սոյն 1900 թւի յունւարի 22-ին իր գրական և հասարակական գործունէութեան տասնամեակը ողջունողներին: Եւ՛ լսելով այդ ազնիւ պատանու սրտառուչ խօսքերը՝ դժւարին էր, այո՛, դժւարին էր չհաւատալ նրա «հասարած»-ին...

III.

ԻՒՐԻՑ ԱԼԷՔՍԷՅԵՒԻՉ ՎԵՍԵԼՈՎՍԿՈՒ ԳՐԱԿԱՆ ԵՒ
ՀԱՍՏԱՐԱԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԵԱՆ ՏԱՄՆԱՄԵՍԿԻ
ՀԱՆԴԷՍԸ.

„...Твои намъ понятны и близки мечтанья,
Намъ дороги мысли твои!“⁴⁾

Ю. Веселовский.

Մոյն 1900 թվի յունւարի 22-ին Իւրիյ Ալէքսէքսէիչ Վեսելովսկու գրական և հասարակական 18^{XII/27} 89 — 1899 թ.թ. տասնամեակն ի մի խմբել-գրաւել էր Մոսկւայի հայ գաղութի մի քանի անդամներին: Այդ օրը՝ համեստօրէն նախադժած հանդիսում ունէինք յայտնելու երիտասարդ գործչին մեր երախտապարտ շնորհակալիքը:

Ծերունազարդ հայր-Վեսելովսկին՝ յարգելի պրոֆեսոր Ալէքսէյ Նիկոլաւիչը ներկայ էր իր որդու տասնամեակի հանդիսին և, ոչ պակաս քան ուրիշները, ծափահարում էր իր որդուն ուղղւած մի սուտար շարք հեռագրներին, սուղերձներին և ճառերին: Այստեղ մարդասիրութեան և աշխատանքի ջերմ-

⁴⁾ «Բոցնորքը հասկանալի և մօտ է մեզ, մեզ համար թանգ են քո մտքերը»:

մտաւոր տխրեանն արտայայտում էր իր համակրանքը նոյն մարդասիրութեան և աշխատանքի երկարատեւ զինւորին:

Գնահատելի տեսարան...

Հանդիսականներս հաւաքւած էինք «Կոնախնետալ» հիւրանոցում, ուր ժամը 8-ին երեկոյեան եկաւ և ինքը՝ երիտասարդ գործիչը՝ իր մտերիմ պ. Ալ. Մատուրեանի ուղեկցութեամբ: Շարունակ և բուռն ծափահարութիւններով հանդիպեցինք նրան: Համեստազոյն գործիչը զգացւած էր՝ տեսնելով իրեն շրջապատող ծանօթ անձերի շարքում մի քանի՝ մինչ այդ օրն իրեն անծանօթ անձեր ևս: Նա առանձին-առանձին սեղմեց հանդիսականներին ձեռքերը՝ յայտնելով իր սրտագին շնորհակալութիւնը...

Նստեցինք ճաշի... Մէջտեղ եկաւ շամպանեան, և ահա՛ բարձրանում է իր տեղից «Լեոնի վշտի» պատկառելի հիղինակը և՛ ոռոսերէն լեզուով ջերմագին՝ ողջունելով իր «նախկին ազատ ունկնդիր աշակերտին»՝ առանձնապէս շեշտում է այն կէտի վրա, որ «Իւրիյ Վեսելովսկին, թէև երիտասարդ, գործում է անձանձիր և անտես առնելով այսօր գրեթէ ամեն մի ազնիւ գործչին հանդիպող «ինչպիսիքս քարակոյտերը», իրական կեանքի երբեմն զգալի հարւածները»: Ճառախօսը հաւատ է յայտնում, որ «երիտասարդ Յոբելարն ապագայում ևս կմնայ ազնիւ պաշտպան մի թշւառ ազգի՝ հայ ազգի: Այդ կէտում Ձեր տասնամեայ անցեալը բաւարար գրաւական է իմ աչքում» — վերջացնում է իր խօսքը յարգելի Սմբատ Շահ-Ալիզը՝ բուռն ծափահարութիւններ յարուցանելով իր զգացւած և խորիմաստ խօսքերով:

Բարձրանում է տեղից պ. Մ. Բարխուդարեանը: Սա յայտնում է, որ «Նոր-Դար»-ի խմբագրութիւնը հեռագրով յանձնարարել է իրեն՝ ներկայացուցիչ հանդիսանալ այդ օրւայ յորելեանին (Մափեր): Պարոնը կարդում է հայերէն լեզուով գրած իր ողջոյնը «Յորելեարին»՝ և՛ «Նոր-Դար»-ի, և՛ իր խմբագրութեամբ լոյս տեսնող «Ճանգէս Գրականական և Պատմական» վեցամսեայ ժողովածուի կողմից: Պարոնի ողջոյնը գրաւոր լինելու պատճառով՝ զիւրութիւն ունիմ բերել այն այստեղ գրեթէ լիովին: Ս.հա այդ ողջոյնը.

«Մեծարգոյ Իւրիյ Ալէքսէեիչ: Նոր-Դար»-ի խմբագրութիւնը ինձ լոյս պարտաւորութիւն է գրել այսօր ողջունել Ձեզ Ձեր գրականական գործունէութեան տասնամեակի առթիւ: սիրով կատարում եմ այդ յանձնարարութիւնը և մի և նոյն ժամանակ ողջունում եմ իմ կողմից, որպէս հրատարակիչ Պրականական և Պատմական հանդիսի, ուր իւր ժամանակին հիւրընկալուել է Ձեր մի յօդուածի թարգմանութիւնը: Ամենքը այսօր ողջունում են Ձեզ Ձեր մայրենի լեզուով: Թոյլ տուէք, որ իմ ողջոյնը լինի այն ազգի լեզուով, որի գրականութեան և կեանքի ուսումնասիրութեան Դուք նուիրել էք բաւականին և ժամանակ, և աշխատանք:

«Անշուշտ՝ գրականական գործունէութեան տասնամեակը մեծ շրջան է յորելեանի համար. բայց երբ ուշի ուշով մտարերենք պարագաները, այն բոլոր աղէտները, թշուառութիւններն ու հալածանքը, որոնք վերջին տասը տարուայ ընթացքում տեղի ունեցան և այժմ էլ տևում են իրենց սոսկալի հետևանքներով հայ ազգի կեանքում. . . . — այն ժամանակ մեր աչքում աւելի գին և արժէք է ստանում Ձեր գործունէութիւնը. . . . Ստում եմ այդպիսի դառնութիւններով լցուած մի ժամանակ մեզ համար շատ թանկ և գնահատելի էր ամեն մի ճշմարիտ և արդարացի խօսք հայ ազգի մասին, և մենք, կարգալով այդ միջոցին Ձեր

գրէի արդիւնքը, միտիթարվում էինք, որ կան տակաւին ոուս հասարակութեան մէջ անկաշառ և արդարամիտ մարդիկ, որոնց համակրութիւնը վայելում է մեր բազմաշարքար ժողովուրդը:

Դուք ստանձնեցիք միջնորդի պաշտօն. ոուս ինտելիգէնտ հասարակութիւնը սկսեցիք ծանօթացնել հայերի, նոցա կեանքի մտաւոր աշխարհի հետ: Մանր էր գործը, որովհետև՝ հայ գրականութիւնը շատ անմշակ վիճակի մէջ լինելով, կարևոր նիւթերը պակասում էին, որ փոքր է շատե թեթեւացնէին Ձեր սկսածը, սակայն՝ չնայելով բոլոր խոչընդոտներին, Դուք տոկունութեամբ և յամառութեամբ առաջ էիք գնում, երկիւղ չկրելով նոյն իսկ նիւթական զրկանքից:

«Ճասք տարուայ ընթացքում, ըստ չափու հնարաւորութեան, Դուք ո՛չ մի առիթ բաց չէք թողել Ձեր նպատաւոր և համակրական խօսքը ասելու հայերի մասին. հրապարակ հանելով գրականութեան մէջ արտացոլող թերուպիւնները, ցոյց էք տուել, որ այս ազգի մէջ էլ առաքիթիւնները, ցոյց էք տուել, որ այս ազգի մէջ էլ առաքիտութիւններ են ապրում, որ սա էլ ունի իւր մտաւոր կեանքը: Մտղկաբաղ անելով հայոց լաւագոյն բանաստեղծութիւններից, Դուք մի փունջ կազմեցիք, որ ունի իւր առանձին հոտը, և այդ փունջը Ձեր ազգին մատուցեք ցոյց տալու, որ այս ժողովուրդն էլ գեղարուեստական ճաշակից զուրկ չէ. իսկ «Армянские беллетристы» ժողովածուի հրատարակութեամբ մի դաս էլ տուէք հայերիս, թէ ինչպէս պէտք է ուսումնասիրել հեղինակներին, տալով բազմաթիւ յօդուածներ նոցա կենսագրութեանց և երկասիրութիւնների մասին: Ախորժելի է ինձ յիշատակել այստեղ և այն, որ «հանրագիտական Բառարանում» Ձեր շնորհիւ են տեղի գտել մեր նշանաւոր հայրենակիցներից շատերը և այն՝ լիամասն և ճշգրիտ տեղեկութիւններով: մինչդեռ այնտեղ եթէ պատահում էլ էին մի քանի անուններ, սակայն թերի և անկատար տեղեկութիւններ էին տրվում:

«Ճշմարտութեան ձայնը սովորաբար դժուար է լինում լսելի դարձնել մեծամասնութեան. բայց երջանիկ է նա,

որ իրեն այդ գործին է նուիրել, և Դուք Ձեր գործունէութեան առաջին տասնամեակում հաւատարիմ էք մնացել այդ ազնիւ նշանաբանին:

«Ի սրտէ ցանկանում եմ, որ ապագայում ևս անյող-գողդ քայլերով առաջ ընթանաք Ձեր ընտրած ճանապարհը և նոյն աշաղջութեամբ և կորովամտութեամբ առաջ տանէք Ձեր սիրած գործը, հաւաստի լինելով, որ այդ «անարդուած» Ժողովրդի մէջ միշտ կը գտնուին երախտագէտ սրտեր, որոնք, եթէ ոչ մի շօշափելի իրով, գոնէ ջերմ և մաքուր զգացմունքով միշտ քաջալեր կը հանդիսանան Ձեզ և կը գնահատեն Ձեր արդիւնաւոր գործունէութիւնը:» (Մափեր):

Բարձրանում է տեղից հանդիսին ներկայ եղող ուսանողներից մէկը՝ պ. Ս. Քապանակեանը և զգացւած կարգում է ուստիքն լեզուով⁵⁾ զրւած Մոսկւայի հայ Ուսանողութեան ուղերձը: Այդ ուղերձը մի շատ գեղեցիկ բնագիծ — բնորոշումն է Իւրիյ Ալէքսէեիչ Վեսելովսկու տասնամեայ գործունէութեան, և ես կարեւոր եմ դատում թարգմանաբար բերել այն այստեղ լիովին:

Ահա՛ Մոսկւայի հայ Ուսանողութեան այդ ուղերձը.

«Մտքով սաւառնելով դէպի ձեր սուղ շրջանը, որը գումարեւել է համեստօրէն տօնելու մեր երիտասարդ արդիւնաշատ զրոյց Իւրիյ Վեսելովսկու տասնամեակը, մենք, հայ ուսանողներս, անընկճելի պարտականութիւն ենք զգում՝ յայտնելու մեր ամենամեծ շնորհակալութիւնը և խորին յարգանքը՝ հայ զրականութեան զրեթէ անմշակ, անձեռնամուխ

⁵⁾ Յետագայ բոլոր ճառերը և այլն սուած են ուստիքն լեզուով:

անդաստանին նւիրւած տասնամեայ բեղմնաւոր գործունէութեան առթիւ:

«Իւրիյ Ալէքսէեիչ. Վերջին տասնամեակը հանդիսանում է իբր մի էպոխա փոքրիկ հայ ազգի համար: Այդ ժամանակամիջոցում հայ ազգը կրեց անմոռանալի դղրդիւններ, որոց հետեանքն էր՝ մի տեսակ ինքնուրոյն ուղղութիւն հայ մտքի. ազգային գիտութեան և զրականութեան ցանկալի՝ հանգիստ և անվրդով ուսուցմասիրութիւն յառաջանալու փոխարէն, երևան եկաւ մի դժւարին հոսանք՝ այսպէս թէ այնպէս, լուծել բազմաչարչար ազգի անորմալ կեանքի արտադրութիւնները, սրա պրակտիկ օրէցօրի կենսունակ հարցերը... Ձեզ էր վիճակւած լրացնել շօշափելի պակասը՝ իրականութիւն, կեանք տալ յառաջացած հոսանքին:

«Շարունակ տասը տարի Դուք անմասն տոկունութեամբ ուսուցմասիրել էք հայ զրականութեան և գեղարեւոտին վերաբերեալ բազմատեսակ հարցերը՝ հայ բանաստեղծութիւնը, թատրոնը, զրականութիւնը պատկերացրած են Ձեր՝ մամուլի էջերում և առանձին հրատարակութեամբ լոյս տեսած՝ մի պատկառելի շարք կազմող աշխատութիւնների մէջ:

«Այդ, երբեմն համազգաց, համապատասխան զնահատութեան չհանդիպող՝ դժւարին գործում պարզւեց՝ և՛ Ձեր՝ դէպի հայ ազգը տածած ջերմ սէրը, և՛ Ձեր տոկուն յատկութիւնը՝ ըմբռնել-իւրացնել այդ ազգի ոգին, սրա պատմական և առօրեայ նիստ ու կացի ազգային գոյնը:

«Շնորհիւ Ձեր թարգմանչական ընտիր յատկութիւնների, շնորհիւ Ձեր անզուգական տաղանդի՝

2090

ժողովրդականացման գործում, մեր աղքատիկ գրականութեան և համեստ գեղարւեստի սիւները՝ Աբովեան, Շահ-Աղիլ, Բաֆֆի, Ադամեան, Սունդուկեանց և այլն Ձեր մէջ գտան իրենց արժանի քննադատին:

«Իւրի՛յ Ալէքսէեի՛չ. Դուք, Ռն - Ռա՛կը ոուս իտակիգէնցիայից, սիստեմատիկ աշխատութիւններով ճանաչել տւիք ոուս հասարակութեանը հայ ազգի գրականութիւնը և գեղարւեստը, ի դերև հանեցիք այդ հասարակութեան՝ երբեմն աղօտ, երբեմն խառնաշփոթ „ծանօթութիւններ“-ը և „տեսակէտներ-կարծիքներ“-ը՝ հայ ազգին և սրա կուլտուրային վերաբերեալ:

«Ձեր վաստակն անգին է, Ձեր գործը՝ անմոռանալի՛ և՛ հայ, և՛ ոուս հասարակութեան համար:

«Սյսօր, դնելով Ձեր առաջ մեր ամենանկեղծ շնորհակալեքը, սրտազինս մաղթում եմք Ձեզ ոյժ և կարողութիւն՝ երկար տարիներ դոյն օրինակելի տոկոնութեամբ գործելու սիրածդ ասպարիզում:» (Ստորագրութիւններ):

Զգացւած կարդացւած ուղերձի տպաւորութիւնն ահագին էր. սրան հետևող ծափահարութիւնները՝ տևողական:

Յորելիարը բարձրանում է տեղից և մի առանձին պատկառանքով ընդունում այդ ուղերձը: «Իա ինձ համար անչափ գնահատելի է» — լսում է նրա շքրթունքներից:

Բոպէական լուութիւն...

Բարձրանում է տեղից պ. Ալ. Ծատուրեան և սկսում է կարգալ մի սուար շարք հեռագրներ:

Սյստեղ միայն հանդիսականներին համար պարզւեց, թէ որքան դժւարին է նախօրօք գծագրել մարգասէր գործունէութեան, ազնիւ գործի արձագանքի սահմանազծերը: Նանդիսի կարգադրիչներն իրենց բարոյական պարտականութիւնն էին համարել գրաւոր դիմել Իւրի՛յ Ալէքսէեի՛չ Վեսելովսկու ամենամօտ անձնաւորութիւններին՝ յայտնելու կայանալի «համեստ հանդիսի» մասին: Նամակներ գրւած էին մօտաւորապէս 10 հատ, մինչդեռ արդէն յունւարի 22-ին ստացւած հեռագրների թիւն գրեթէ անցաւ 40-ից, և մի շարք հեռագրներ կրում էին 10—20 և աւելի ստորագրութիւններ: Մի քանի հեռագրներ և շնորհաւորական նամակներ ստացւեցին ապա՝ յունւարի 22-ից յետոյ ևս:

Հեռագրներից ստացւած տպաւորութիւնը ուրախալի էր նամանաւանդ որոշ տեսակէտից: Սյստեղ լռել էր՝ երբեմն մեր մէջ ամեն ինչ ոտնակոխ անող կուսակցական պայքարը և լսում էր՝ հանուրին վերաբերեալ գործի Ռաֆէլեան անաչառ գնահատութիւնը:

Ստացւած հեռագրները, իսկապէս, «հեռագրներ» չէին, այլ՝ երբեմն բաւականին ընդարձակ «յօր-աթ-նէր», և այդ «յօր-աթնէր»-ից շարունակ լսում էր ազնիւ գործունէութեան ազնիւ գնահատութիւնը. այստեղ հնչում էր հայագրիներիս ազնիւ լարերի ազնւագոյն երգը...

Ծանկալով առաջն առնել նման տեսակ դէպքերում հասկանալի կրկնութիւնների՝ ես այստեղ կրեբեմ (թարգմանաբար) հեռագրները քաղւածօրէն:

Սյուպիսով, ի միջի այլոց, տւած կլինիմ Իւրիյ Ալէքսէեիչ Վեսելովսկու տասնամեայ զրական և հասարակական գործունէութեան գրեթէ քսուր կողմերի նկարագիրը, դոյն գործունէութեան քաղաքական գնահատութիւնը:

Ս. Էջմիածնի Գէորգեան ձեւարանը շեշտում է Յոբելեարի «տաղանդաւոր զրական գործունէութիւնը, ուր բաւականին մեծ տեղ է բռնում հայի կեանքը և զրականութիւնը»:

Շուշու հայոց Թեմական հոգևոր Դպրանոցը շեշտում է Յոբելեարի «իդէալական գործունէութիւնը»:

Երևանի հայոց Թեմական հոգևոր Դպրանոցը ողջունում է Յոբելեարին՝ իբրև «անաչառ զրականի և հայ ազգի ազնիւ ընկերոջը»:

Շուշու հայոց Թեմական հոգևոր Դպրանոցի մի խումբ Ուսուցիչներ հեռագրում են՝ «Դուք արաքիւն ծանօթացրիք համազգիներիդ հայ զրականութեան և գեղարեւոտի հետ» և շեշտում են Յոբելեարի «ոուս ինտելիգէնցիային հայի հետ ծանօթացնելու բեղմնաւոր, ազնիւ գործունէութիւնը»:

«Մուրճ»-ի խմբագրութիւնը հեռագրում է «յանձին Իւրիյ Վեսելովսկու ոուս զրականը դառնում է հայի հարազատը և հայը հպարտ է, երբ ունի մի սյուպիսի բարեխիղճ և տաղանդաւոր ներկայացուցիչ: Ամսաթերթս» — աւելացնում է «Մուրճ»-ի խմբագրութիւնը — «պատրաստ է հանդանակութիւն բանալ Յոբելեարի՝ հայերին վերաբերեալ զրեւաճքներն առանձին հատորներով հրատարակելու համար»:

Գեղեցիկ և միանգամայն համակրելի առաջարկ...

«Թատրոն»-ի խմբագրութիւնը շեշտում է, որ Յոբելեարն ունի «անշահախնդիր գրիչ», որ «նա արաքիւն ծանօթացրեց ոուս ընթերցողին հայ ազգի աշխարհատեսութեան հետ՝ միաժամանակ մատնանիշ անելով միակ հաստատուն ուղին այդ ազգը բնագծելու գործում»: «Թատրոն»-ի խմբագրութիւնը համոզւած է, որ երիտասարդ Յոբելեարը «ասպագայում աւելի ևս եռանդ ունի արտադրելու: Սյլ յոյս չենք կարող տածել բարին ուսուցանող, ազնիւր և գեղեցիկը պարզաբանող Վեսելովսկիների հոչակաւոր տոհմի տաղանդաւոր ներկայացուցիչ»:

Պ. Գաբրիէլ Սունդուկեանցը շեշտում է Յոբելեարի «զրական ասպարիզում ասպացուցած բեղմնաւոր գործունէութիւնը՝ յանուն ազգերի եղբայրութեան, սոցա գիտական ստացւածքի մարդասէր և արդարադատ ընդհանրացման»:

Պ. պ. Պերճ Պաօշեանց, Աղայեանց, Մուրացան, Յ. Թումանեանց ողջունում են Յոբելեարի «ազնիւ գրիչը, որ հեռու հիւսիսում շատերին կապեց — միացրեց հայ ազգի հետ և ընթերցող շրջաններում հետաքրքրութիւն յարուցեց դէպի մեր անցեալը, խնամատար համակրանք՝ դէպի մեր արդին, որ «լեօնե՛ր՝ ճանապարհ հարթող — պատրաստող արաքիւն զինուոր հանդիսացաւ մեր զրականութեանը համբաւ զրաւելու գործում»:

Պ. Շիրվանզադէ ողջունում է «վերին աստիճանի համակրելի Յոբելեարին՝ աւելի ևս ընդարձակում — զարգացումն ցանկալով բազմակողմանի տաղանդին»:

Պ. Նար-Դոսը ողջունում է «մեր սիրելի, քաղցրիկ զրականութեան տաղանդաւոր միջնորդին, որքան կարելի է շատ այսպիսի ոուս եղբայրներ»:

Պ. Մինաս Բերբերեանը հեռագրում է «սրխմում եմ Գո՝ ընկերիս ձեռքը»:

Պ. Յ. Սունդուկեանցը շեշտում է, որ Յոբելեարը «անշահախնդրարար՝ յանուն հրապուրիչ զաղափարի ծանօթացնում էր ոուս ինտելիգէնտ դասակարգն ազգիս բանաստեղծութեան հետ»:

Պ. Գ. Զուբարը հեռագրում է «Արեգակի ճառագայթներն ամենից աւելի ուրախութիւն են պատճառում խղճուկին, որը ճարճ է իր օրերը մթին և աղքատիկ խրճիթում: Բազմաշարք հայ ազգի գրականութեանն անձանօթ էին օտարի փաղաքշանքը, օտարի սէրը: Դուք մէկն էիք այն «ակա-ախեանձնաւորութիւններից, որ սիրալիր աչքերով կանգ առին նրա վրա, հետաքրքրեցին հայերի ներկայով և անցեալով: Յայտնելով ջերմագին շնորհակալութիւնս՝ սրտագինս սխմում եմ Ձեր ձեռքը և աղաչում եմ Աստուծուն, որ Ձեր սրտում դեռ շարունակ տասնեակ տարիներ անշէջ պահի դէպի հայ ազգը, սրա պատմութիւնը և գրականութիւնը տաճածդ սէրը»:

Կիւեի հայ Ուսանողութիւնը հեռագրում է «Սրտագինս ողջունում ենք Քեզ, ազնիւ բանաստեղծիդ, իբր արդարագատ աշխատաւորի և հայկական համեստ բանաստեղծութեան արտայայտչի: Թո՛ղ ապագայում ևս չմարի եռանդդ մտքի մշակի փշալեց ասպարիզում»:

Ս.-Պետերբուրգի հայ Ուսանողութիւնը հեռագրում է «Շրջապատող փուշ և տատասկը չնւազեցրին եռանդդ: Փայփայած նպատակդ փայլում էր՝ իբր մի լուսատու փարոս, հեռու տարածելով եղ

բայութեան և սիրոյ, ճշմարտութեան և բարւոյ լուսափայլ ճառագայթները: Ձեր գրչն անձանձիր աշխատում էր՝ երևան հանելով ոուս հասարակութեան առաջ՝ և՛ բաղդից, և՛ հանգամանքներից հալածւած հայ ազգի վեշար և ուրախութիւնը, բայում-կոփում էր հայազգի քնարի տխրագոյց նւազը, հայ ծնւած կնոջ զգացմունքը և ցնորալեց պառանցանքը... Թո՛ղ վարդագոյն ապագան հանդիպի Ձեզ, գրական արդարագատ, ազնիւ զինւոր: Երկնք կեանք Ձեզ, անսպառելի եռանդ, անձանձիր գործունէութիւն գրչիդ, մուսայի արժանանուն աշխատաւոր»:

Աստրախանի հայոց Եղբայրասիրական Ընկերութիւնը ողջունում է Յոբելեարի «պատկառելի գործունէութիւնը՝ աշխատանքի և գրական ասպարիզում»:

Բագւի հայ Իրամատիկական Խումբը ողջունում է Յոբելեարի «բազմակողմանի, բեղմնաւոր և համակրելի գործունէութիւնը», զրւատելով նրան՝ իբր «հայ թատրոնի և գրականութեան տաղանդաւոր քննադատի, գրական ասպարիզի բազմախորհուրդ և շնորհալի տաղանդի, որը գործում է յանուն ազգերի մերձեցման գաղափարի, դոցա փոխադարձ յարգանքի և սիրոյ»:

Շուշու մի խումբ Տիկնայք շեշտում են Յոբելեարի «առանց կանխակալ թէորիաների և նախապաշարմունքների գործունէութիւնը, որը նւիրւած է ազգիս լեզւի և գրականութեան ուսումնասիրութեան... Մենք ցանկանում ենք» — աւելացնում են նոքա — «աւելի ևս զարգացած տեսնել Ձեր տաղան-

ղը՝ Վարդան Մամիկոնեանի երգը և „Արաքսի արտասուքը“ շարունակելու համար: Կեցցե՛ս, ազնիւ ասպարիզի ազնւագոյն ախոյեանդ):

Նոր-Նախիջևանի մի խումբ Տիկնայք յայտնում են իրենց «անկեղձ համակրանքը և խորին շնորհակալութիւնը „ЖЕНСКАЯ ДОЛЯ“-ի հեղինակին, որը» — գրում են նոքա — «միշտ պատկերանում էր մեր առաջ ոչ միայն՝ իբր տաղանդաւոր գրական, այլ՝ իբր մարդասէր մի անձնաւորութիւն, որի զգայուն սրտում միշտ և ամենուրեք արձագանք է գտնում՝ և՛ բարին, և՛ գեղեցիկը»:

Շուշու հայ Երիտասարդութիւնը շեշտում է Յոբելեարի «մարդասէր գործունէութիւնը»:

Բաթումի հայ Երիտասարդութիւնը շեշտում է Յոբելեարի «շնորհալի գրական գործունէութիւնը» և, ըստ ռուսաց սովորութեան, երգում է՝ «МНОГАЯ ЛЬТА!» (երկար տարիներ):

Երևանի հայ Երիտասարդութիւնը մաղթում է Յոբելեարին՝ «ծառայել ցայդ օրւայ խի նպատակին»:

Շուշու ռուսանոց Երիտասարդութիւնը՝ շեշտելով Յոբելեարի «մարդասէր գործունէութիւնը, ցանկանում է այդ ասպարիզում գործող Տիկնայք և Նախիջևանի ներկայացուցչի գրչին ուժգնութիւն և անթաւառ գեղեցկութիւն՝ իրագործելու Յոբելեարի ընտիր մարդասիրական գաղափարները և ձգտումները, և սպասում է նրա գրչից նոր „Армянские беллетристы“ և „Արաքսի արտասուքը“... Կեցցե՛ս, ազնիւ, վեհանձն գործի ախոյեանդ»:

Գանձակի հայ Ինտելիգէնցիան՝ շեշտելով Յոբելեարի «բեղմնաւոր գրական գործունէութիւնը», միացնում է «խորապէս զգացած հայերի շնորհաւորանքը, հայիրի, որոց պատմութիւնը և գրականութիւնը նա այնպիսի սիրով ուսումնասիրում էր դեռ աշակերտական նստարանի վրա, և ապա՝ շնորհիւ իր տաղանդաւոր յօդածների և բարձր գեղարւեստալից թարգմանութիւնների՝ դիւրամտելի կացուցանում ռուս ընթերցող հասարակութեան, որով նա ոչ պակաս նպաստեց ռուս հասարակութեան շրջաններում պատմութեան այդ խորթ որդիների մասին աւելի ճիշդ տեղեկութիւններ և տեսակէտներ յառաջանալուն»:

Բագրի հայ Ինտելիգէնցիան ողջունում է յանձին Յոբելեարի՝ «Ռուսաստանի ազգութիւնների մէջ եղբայրասիրութիւն սերմանողներից առաջններից մէկը և խնդրում է ընդունել իր նւէրը»։ Նւէրը պիտ գնէր Մոսկւայում, որի համար փոխադրւած էր 300 ռուբլի։ Այդ գումարով գնեց և նւիրեց Իւրիյ Ալ. Վեսելովսկուն պ. Գ. Բաշինջաղեանի՝ «Дарьяльское ущелье» իւղանկարը՝ ոսկեղօծ շրջանակով և յատուկ լապտերով հանդերձ։ Շրջանակի վրա (պատկերի տակը) ամրացրած է ոսկեղօծ տախտակ, որը, համաձայն պ.պ. Նւիրատունների ցանկութեան, կրում է հետեւեալ մակագրութիւնը՝

„Юрію Веселовскому
въ честь десятилѣтія его литературной дѣятельности
отъ
группы почитателей-Армянъ въ Баку
22 Января 1900 г.“

Բագրի նոյն Հայ Ինտելիգենցիայից ուղարկեաժ էր Իւրիյ Ալ. Վեսելովսկուն՝ իբրև նւեր — ոսկէ գրիչ (փետուրէ գրչի ձեով), որը կրում է հետեւալ մակագրութիւնը՝

„Ю. А. Веселовскому

отъ Бакинской Армянской молодежи

1900 г.“

Ապա՝ Բագրի նոյն Հայ Ինտելիգենցիայից նւիրաբերեց՝

«Աւետարան գրչագիր ամի Տեառն 887:— Quatuor Evangeliorum—Versionis Armeniacae Codex A. D. DCCCLXXXVII. — Լուսատիպ հրատարակութիւն գրչագրի Լազարեան ձեմարանի Արեւելեան լեզուայ արդեամբ պատուոյ հոգաբարձուի ձեմարանիս Իշխան Սիմէօնի Աբամէլիք-Լազարեան, 1900 թ. Մոսկուա»⁶⁾։

Նոր-Նախիջևանի մի խումբ Ինտելիգենտներ շեշտում են Յոբելեարի «Համակրելի գրական գործունէութիւնը, որի նպատակն է՝ ժողովրդականացնել ուսւ հասարակութեան շրջաններում հայ գրականութիւնը և վշտալի ազգի կեանքում հրեան եկած ամեն տեսակ կուլտուրական երեւոյթները: Կեցցես, լուսոյ և ճշմարտութեան երիտասարդ ախոյեանդ»։

Ս. Պետերբուրգի Հայ Վաճառականները շեշտում են Յոբելեարի «բեղմնաւոր, ազնիւ գործունէութիւնը՝ ուսւ ինտելիգենցիային հայի հետ ծանօ-

⁶⁾ Հարկ է յիշել, որ Իւրիյ Ալ. Վեսելովսկին իր տասնամեակի առթիւ ստացել էր այլ ևս մի քանի գրքեր՝ պ.պ. Յ. Սոլովեանից, Մ. Չալկեանից, Ստեփաննոս Տէր-Սարգսեանից, Յ. Շահնազարեանից և նւաստիցս։

թացներու ասպարիղում, գնահատելով նրա՝ Հայ ազգին, Հայ գրականութեան և զեղարեւոտին վերաբերեալ արտայայտած անաչառ քննադատութիւնները»։

Աստրախանից մի խումբ համակրողներ ողջունում են Յոբելեարի «անկեղծ, անշահախնդիր գրական գործունէութիւնը», շեշտելով, որ նա «հետաքրքրեց իրեն օտար և ամեն ինչից զրկեած մի ազգի կեանքով և սկսեց դէպի նա գրաւել ուրիշների համակրանքը և հետաքրքրութիւնը»։

Երևանից մի խումբ համակրողներ ողջունում են յանձին Յոբելեարի՝ «հայի համար մի անզուգական գործչի»։

Ս. էջմիածնից մի խումբ համակրողներ շեշտում են Յոբելեարի «ազնիւ գործունէութիւնը»։

Արմաւիրից մի խումբ համակրողներ շեշտում են Յոբելեարի «բազմարդիւն գրական գործունէութիւնը՝ ուսններին ընտիր հայ գրեածքների հետ ծանօթացնելու գործում և անշահախնդիր ծառայութիւնը մարդասիրութեան զաղափարին»։

Արժ. Զատիկեան քահանան հեռագրում է՝ «Համակրելի գործչին „многая лета!“» (երկար տարիներ)։

Պ. Նիկողայոս Բերբերեանը (Ս. Պետերբուրգից) ցանկանում է «յարատեութիւն (Յոբելեարի) համակրելի նպատակին՝ ծանօթացնել ուսւ հասարակութիւնը հայի պօհղիայի հետ»։

Եւ այլն, և այլն, և այլն...

Հանդիսի ընթացքում կարդացեաժ հեռագրները մի առ մի ընդունւեցին բուռն ծափերով: Հանդիսականներին առանձին ուշադրութիւնը գրաւեցին մեր

Թեմական Դպրանոցների և Ուսանողութիւնների հեռագրները: Կրկնակի բուռն ծափեր յարուցին պ.պ. Գ. Սունդուկիանցի, Պ. Պաօշեանցի, Շիրվանզադէի, Գ. Զուբարի, Նար - Դոսի, Մ. Բերբերեանի հեռագրները:

Հեռագրների ընթերցումից յետոյ խօսքը տրեց նւաստիս:

Ակնարկելով, որ երիտասարդ գործչի տասնամեակին նւիրած մեր՝ համեստօրէն նախադած հանդէսը միանգամայն անսպասելի կերպով աճեց և ստացաւ հասարակական բնաւորութիւն, ես շեշտեցի այդ երեւոյթի մի քանի խրատական կողմերը: «Սյսօր, երբ գրեթէ ամենուրեք տիրում է ստոր ոտնձգութիւնը և՛ երբեմն ամեն սրբութիւն ստնակօխ անող չկամութիւնը, նման տեսակ հանդէսները մի շատ ուրախալի և ցանկալի երեւոյթներ են: Ուրախալի է տեսնել՝ ինչպէս զանազան ուղղութիւնների տէր անհատներ խմբւում են մարդասէր գործի շուրջը և „կեցցէ“ներով ողջունում մարդկութեան ընտիր զաւակին:» Ապա՝ յիշեցնելով, որ մի ինչ որ տեղ նկարագրած է, թէ ինչպէս ծերունի մայրը դողդոջուն քայլերով մօտենում-համբուրում է իր «մուրազ»-ն արդարացրած որդու ճակատը՝ ես աւելացրի. «Դուք, ազնիւ երիտասարդ, առաջին արդարացրէք Լազարեան ձեմարանի հիմնադրի Գ. Ն. նպատակը, և ահա՛ ինչու ինձ դիւրամարտելի չի թւում այն, որ այսօր այստեղ չի լւում, չի զգացւում Լազարեան ձեմարանի համբոյրը... Յամենայն դէպս, ինձ մնում է ի բոլոր սրտէ ցանկալ Ձեզ արեւշատ տարիներ, ցանկալ Ձեզ դոյն տոկունութեամբ կրել մարդասէր սրտիդ ազնւագոյն դրօշը՝ դիտակից պաշտպան հանդիսանալ ձեր կողմից»

Հայ ազգին: Միաժամանակ խոնարհաբար խնդրեմ ընդունել նւաստիս հրատարակութեամբ լոյս տեսած «Նոր-Փորձ»-ի խմբագրութեան լիակատար յարգանքը ևս:» (Ծափեր):

Բարձրանում է իր տեղեց ինքը՝ Յոբելեարը և սկսում է խօսել իրեն յատուկ համեստութեամբ: Նա յիշում է Լազարեան ձեմարանում անցկացրած տարիները, իր ընկերական շրջանը, յիշում է՝ ինչպէս սկսեց սովորել հայերէն, ինչպէս՝ սիրել հայ լեզուն և զրականութիւնը, ինչպէս առաջին անգամ փորձեց իր գրիչը հայերէսին վերաբերեալ նիւթերի վրա... «Անմոռանալի՛ օրեր» — բացականչում է նա և ապա՝ անցնում իր ուսանողութեան և յետագայ տարիներին: Նա պատկառանքով յիշում է «Армянские беллетристы» զրքի առաջին հատորի ունեցած յաջողութիւնը, մինչդեռ դոյն գրքի երկրորդ հատորի մասին չի կարող յիշել «առանց սրտի խորին ցաւ զգալու»: «Ես պարապել եմ և պարապում եմ հայ զրականութիւնով, որովհետեւ այդ զրականութիւնն ունի իր յիրաւի գրաւիչ կողմերը. դա մի զանձ է, որին, ցաւօք սրտի պիտ ասած, մինչ այսօր շատ քչերն են մօտենում: Ես վերաբերւում եմ ուսումնասիրածս նիւթերին՝ իբրև ճաշի և, իսկապէս, չգիտեմ, ինչպէս կարելի է այլ կերպ վերաբերել այդ գործին: ... Ես չգիտեմ աւելի գրաւիչ գաղափար քան ընդհանուր էդիպոսակոն-Ռեան գաղափարն է: Ես հաւատացած եմ, որ այդ, այո՛, այդ գաղափարին է վիճակւած ապագան և նա, վաղ թէ ուշ, կտանի իր յաղթանակը: Սյդ գաղափարին է, որ ես մինչ այսօր ծառայեցրել եմ թոյլ գրիչս, դոյն

այդ գաղափարին եւ կճառայեցնեմ ապագայում եւ իմ համեստ յոգեբեր:»

Բուռն և կրկնակի ծափերը ծածկում են Յորելարի վերջին խօսքերը. նա՛ զգացած նստում է:

Խօսք է խնդրում ուսանող պ. Ս. Քապանակեանը և՛ որոշակի գծերով բացատրելով Յորելարի թարգմանութիւնների նշանակութիւնը, իբր օրինակ, բերում է «Մայր Արաքսի» ստանաւորի նրա թարգմանութիւնը (Մափեր): «Օրինակելի է», — ասում է Պարոնը, «որ Իւրիյ Ալ. Վեսելովսկին իր այդ թարգմանութիւնն արել է դեռ Լազարեան ձեմարանի աշակերտ եղած ժամանակ»:

Խօսք է խնդրում պ. Ս. Մամիկոնեանը և՛ միշտը ակնարկներ անելով Յորելարի անցեալ տասնամեայ դործունէութեան ընթացքում տեղի ունեցած երեւոյթների առթիւ՝ յիշում է, թէ ինչպէս երբեմն Մոսկւայի («Բուսիրկայի համալսարանում») մի ուսանող ամբիոն է բարձրանում և սկսում է խօսել հայերի մասին, սակայն ճառախօսին գրեթէ իսկոյն և եթ ընդհատում են՝ «А что? Армяне — магометане?»...: «Ահա այդպիսի պարագաներում երևան եկաք Դուք, յարգելի Իւրիյ Ալէքսէեւիչ, և աշխատեցիք լոյս սփռել հայի անցեալի և ներկայի վրա: Ես կարծում եմ, որ շատ զիւրին է կցել Ձեր անւանը պիւնէր խօսքը: Ձեմ ծածկիլ և այն, որ Դուք այդ դործում գտնուում էիք բարեկաջող պայմաններում: Ձեր յարգելի հօր և մօր՝ դէպի հայերը տածած համակրանքը բոլորիս քաջ յայտնի են: Պատիւ է բերում Ձեզ, որ Դուք ըստ արժանւոյն օգտուեցիք Ձեզ շրջապատող պարագաներից, սակայն թոյլ

ուէք այստեղ դնահատութեան առնել Ձեր հօր մասը ևս: Ես խմում եմ յարգելի պրոֆեսոր Ալէքսէյ Նիկոլաւիչ Վեսելովսկու կենացը:» (Բուռն և տևողական ծափահարութիւններ):

Տեղից բարձրանում է ծերունազարդ պրոֆեսոր Ալէքսէյ Նիկոլաւիչ Վեսելովսկին. «Իմ անունն ի զուր էք խառնում այս օրւայ հանդիսին: Ես հետաքրքրել եմ հայերով, որովհետև ես հետաքրքրում եմ բոլոր ազգութիւններով: Սակայն ես, ինչպէս այստեղ ասացին, армянисты (հայագէտ) չեմ և չեմ էլ կարող լինել. ես ամենաշատը армянофиль (հայասէր) եմ, ոչ աւելին, և այդ էլ՝ ոչ այնքան շուտուց: Ես կատարեալ զիլլետանտ էի մինչև իմ որդին ուսումնասիրեց հայ լեզուն, և այսօր հայերին վերաբերեալ ունեցած տեղեկութիւններին համար պարտական եմ՝ և՛ որդուս, և՛ նրան երբեմն և այսօր շրջապատող հայ շրջանին: „Армянские беллетристы“ գրքի առաջին հատորը շատ բան սովորեցրեց ինձ. ես զգացի և տեսայ, որ հայ ազգի գրականութիւնն ունի իր անշուշտ գրաւիչ կողմերը, և շատ ցաւում եմ, որ, այդ գրքի հետեւեալ հատորների լոյս չտեսնելով, այսպէս ասած, խզեց տեղեկութիւններիս աղբիւրը: Այժմ ես կանգնած եմ փակ դռան առաջ և չգիտեմ, թէ ի՞նչ կայ այն կողմը: Բայց, անշուշտ, այնտեղ կան շատ հետաքրքրելի բաներ: Ո՛ւր է, որ դռները բացւէին և տային հայ գրականութեան վերաբերեալ ցանկալիք տեղեկութիւնները...»): Ես սիրում եմ Կովկասը, թէև

7) Յ. Գ.: Այստեղ, միջանկեալ և ցաւ ի սիրտ, կցում եմ

Անդրկովկասեան երկաթուղու Բագու - Բաթում գծից միւս կողմն երբէք անցած չեմ, և այսօր իմ ջերմագին ցանկութիւններէց մէկն է՝ անցնել այդ երկաթուղու գծի միւս կողմը, ոտք դնել Հայերի և Կով-

հետեւեալ երկտողը.

«Մշակ»-ի ս. տ. № 163-րդում պ. Տիգրան Յովհաննիսեանը գրում է՝

«Վերջին տարիներս մի տեսակ մօղա է դարձել Հայերէնից ուսերէն թարգմանել: Թարգմանում են մեծ մասամբ այնպիսի բաներ, որ չարժէ թարգմանել, և այնպիսի մարդիկ, որոնց յոժերից վեր է մարդավարի թարգմանելը:

«Traduttore—traditore» [sic!] (Թարգմանիչները դաւաճան են)—ասում է իտալական առածը, Գուցէ ոչ որի այնքան սաղ չէ գալիս այդ առածը, որքան Հայերէնից ուսերէն թարգմանողներին, ի բաց չառած և պ.պ. Իւրիյ Վեսելովսկուն և Մ. Բերբերեանին, որոնք անշուշտ վատ չեն թարգմանել, բայց լաւ բաների հետ թարգմանել են և թարգմանել են տուել այնպիսի թղլ բաներ, այնպիսի անհամարութիւններ, որ (,) յամենայն դէպս, չարժէր ի ցոյց հանել:

«Ինչ պատահել է տեսնել ուսներ, որոնք հիասթափվել են հայկական գրականութիւնից, կարդալով «Армянские беллетристики» գիրքը, որի մէջ, պէտք է խոստովանել, կան վերին աստիճանի անշնորհք և (,) մանաւանդ գեղարուեստի տեսակէտից, նախկ տորներ: Բայց դեռ այդ ամբողջ վնասը չէ, որ հասցրել են մեզ, անկասկած (,) ամենազինւ գիտաւորութիւններով, այդ գրքի հրատարակիչները: Նրանք իրանց գրքով, մանաւանդ նրա երկրորդ հատորով, որ բարեբաղդաբար լոյս չը տեսաւ ամբողջապէս և այլն»:

Յածը՝ գրքոյկիս գլ. VIII-րդում ընթերցողս կգտնի ուս և Հայ մամուլի «Армянские беллетристики» գրքին վերաբերեալ արտայայտած տեսակէտների—կարծիքների ցանկը: Արժի գէթ հարևանցօրէն ծանօթանալ այդ տեսակէտների—կարծիքների հետ, որպէս զի ըստ արժանւոյն գնահատու-

կասում ապրող ուրիշ ազգերի նիստ ու կացին վերաբերեալ նիւթեր պարունակող քնն հոդի վրա: Չգիտեմ՝ երբ կաջողի ինձ այդ... Յամենայն դէպս, Չեր այս օրւայ հանդիսին ես մասնակցում եմ՝ իբր մէկը նրանցից, որոնց համար որդուս և նրան շրջապատող շրջանի գրական աշխատանքը ծառայել են՝ իբր նիւթ հայերի նիստ ու կացը և գրականութիւնն ուսումնասիրելու գործում: Ես առաջարկում եմ հայ գրականութեան զարգացման կենացը:»

Այսպէս վերջացրեց իր խօսքը ընտիր գիտնականի

Թեան առնել պ. Տ. Յովհաննիսեանի այդ «մարդավարի» ինքնուրոյն գրութիւնը...

Յիրաւի՛: Ովքեր են եղել «ուս» «հիասթափողները», ինչ հեղինակութեան տէր են դորա, որ այդչափ ճնշել են պ. Տ. Յովհաննիսեանի «մարդավարութիւն»-ը և թելադրել նրան անշնորհակալ ուրախութիւն՝ «Армянские беллетристики»-ի 2-րդ հատորի «բարեբաղդաբար» (!) լոյս չտեսնելու առթիւ...:

Բարի, մի կողմ թողնենք պ. Տ. Յովհաննիսեանի «մարդավարութիւն»-ը, քանի որ յիրաւի կան մարդիկ, որոց «գրչից, եթէ մի բան կարճ է—դա նոցա բարոյականն է» (Տես «Նոր-Պար», 1900 թ., № 11՝ «Նամակ խմբագրութեան»)։... Սակայն, յամենայն դէպս, գոնէ ըստ իս՝ բացայայտ է, որ պ. Տ. Յովհաննիսեանը, հրապարակաւ քննութեան առնելով ընթերցողի ձեռքում երբէք չեղած մի հրատարակութիւն, eo ipso ոտի տակ է առնում գրական էթիկայի տարրական պահանջը:

Ապա՝ ես խորհուրդ կտայի պ. Տիգրան Յովհաննիսեանին ամօրշտ հրաժարել իր՝ ընթերցողի աչքերին թող փչելու սովորութիւնից, Յիրաւի՛: Իտալական առածն ասում է «Traduttori—traditori» — և ո՛չ, ըստ «դաւաճանութեան» պ. Տ. Յովհաննիսեանի՝ «Traduttore — tradi(?) ore»...

փառքը վայելող հռչակաւոր պրոֆեսսորը: Մեզ բո-
լորիս քնն յայտնի են հայր-Վեսելովսկու հայերին
մատուցած մի շարք ծառայութիւնները. ոչ պա-
կաս յայտնի է և նրա մասնակցութիւնն իր որդու
«հայասէր» ուղղութեան գործում: Մեզ մնում էր
բուռն և կրկնակի ծափերով ողջունել համեստա-
գոյն գիտնականի վերջին խօսքերը:

Բարձրանում է պ. Ս. Մատուրեանը և մասնա-
նիշ է անում, թէ ի՞նչ մասն ունին Յորեւարի՝ հա-
յերին վերաբերեալ աշխատանքում նրա մայրը և
կինը: «Սրանք երկուսը ևս բաւականին գիտեն հա-
յերէն, իսկ կինդ, սիրելի Իւրիյ, հէնց այսօր իսկ
պարագում էր մի հայերէն ոտանաւորի թարգմանու-
թիւնով... Առաջարկում եմ Յորեւարի գործադուր-
մօր և յարգելի աիկնոջ կենացը:» (Բուռն ծափեր):

Բարձրանում է Յորեւարը. «Ես մի համեստ գոր-
ծիչ եմ և այդքան մեծարանքներ լսելու միանգա-
մայն անսովոր...: Յամեայն դէպս՝ տեսնելով բոլորիդ
բացասիրտ վերաբերմունքը դէպ ինձ՝ ես թոյլ եմ
տալիս ինձ պարզել այստեղ, թէ ի՞նչ եմ մտադիր,
ի միջի այլոց, անելու ապագայում հայ զրականու-
թեան վերաբերեալ: Ես այդ ասում եմ ոչ թէ ա-
ռիթ տալու, որպէս զի խօսէք իմ մասին, ոչ այլ
յուսակով՝ թերևս ստանալ Ձեզնից ցանկալիք նորա-
նոր տեղեկութիւններ ուսումնասիրելք հարցերին
վերաբերեալ:» Ապա՝ Յորեւարը յիշեց, որ մտադիր է
«պարագել Ս. Շահ-Աղիզի գրեածքներով, Խորենացու
և Եղիշէի «Պատմութիւն»-ների մի քանի կէտերով հայ
գիւղացու կեանքը հայ գրեածքներում ուսումնասիրե-
լով, և այլն: Վերջացնելով խօսքս», — ասաց Յորեւա-

րը, — «կարևոր եմ դատում յայտնել ամենամեծ
շնորհակալութիւնս այս օրւայ հանդէսը կազմակեր-
պողներին. լիայոյս եմ՝ կհաւատաք, եթէ ասեմ, որ
այս օրւան օրը երբէք չեմ մոռանալու:» (Ծափեր):...

Ճաշից վեր կացանք և՛ խմբելով Յորեւարի շուր-
ջը՝ հրաւիրեցինք նրան սենեակի մի անկիւնը, ուր
սեղանի վրա պատրաստ էր Յորեւարին ընծայելիք
նւէրը (զրատեղանի պարագաներ՝ բիւվարով հան-
դերձ, որի վրա ամրացրած շքեղ տախտակի վրա
մակազրած են իրեն՝ Իւրիյ Ս. Վեսելովսկու խօ-
սքերը՝

„Твои намъ понятны и близки мечтанья,
Намъ дороги мысли твои!“

և ապա՝

„Отъ группы почитателей—армянь въ Москвѣ.“

Իսկ տախտակի տակն ամրացրած է վէնդէլ՝ «Ю.» և «В.»
տառերից, որ կրում է՝ «X» և «Իւրիյ Վեսելովսկի»
մակազրութիւնները): Բուռն ծափերի մէջ մօտեցաւ
Յորեւարը սեղանին և, տեսնելով նւէրը՝ սաստիկ
ղգացած ասաց. «Պարոններ, խնդրեմ՝ հաւատաք,
որ ես մի համեստ մարդ եմ և այդ տեսակ բաների
միանգամայն անսովոր: Ես չգիտեմ ի՞նչպէս շնորհա-
կալ լինեմ Ձեզնից:» (Բուռն ծափեր):

Ժամը 11^{1/2}-ն էր: Յորեւարի հայրը և մի քա-
նիստ հանդիսականներից հեռացան, իսկ մնացածները՝
սուղ շրջան կազմելով՝ դեռ երկար զրուցում էին
այս ու այն հարցերի մասին: Ի միջի այլոց, ուսանող
պ. Ս. Քապանակեանն արտասանեց պ. Ս. Մ. Բ-
սանդր Մատուրեանի «Ձէյթունի հրդէհը» և «Սի-

րուն գարուն» գողարիկ ոտանաւորները: Ինքը՝ Յոբէլեարը ևս արտասանեց իր ոտանաւորներից մի քանի կտորներ. նա հայերէն լեզուով ևս արտասանեց մի ոտանաւոր՝ մի տեսակ աննկարագրելի զւարճութիւն պատճառելով իր նուրբ արտասանութիւնով:

Յրեւելու ժամը մօտենում էր: Ես խօսք խնդրեցի և, զիմելով Իւրիյ Ալէքսէեիչ Վեսելովսկուն, ասացի. «Ազնիւ ընկեր, մեր ցրեւելու ժամը մօտենում է. թոյլ տւէք նւատիս ամփոփել այսօր այստեղ մեր ստացած տպաւորութիւնները և բանաստեղծի խօսքով զիմել ապագայիդ: Գեղեցիկ է այդ խօսքը. նա գնահատում է անցեալդ, շեշտում է գնահատելի ներկադ, նախատեսնում՝ ապագայդ...»

Այո՛

«Не легка твоя будетъ дорога,
Но иди,— не погибнетъ твой трудъ!
Знамя чести и истины, долгъ
Лишь крѣпкіе въ бурю несутъ.
Безконечное мысли движенье,
Чувство разума, правды святой—
Вотъ прямое твое назначенье,
Вотъ твой подвигъ на почвѣ родной»...

Ժամը 1^{1/2}-ին հեռացաւ Յոբէլեարը: Նրան ճանապարհ զրինք բուռն ծափահարութիւններով:

Ժամը 2-ին ցրեցինք մնացած հանդիսականներս ևս՝ տանելով մեզ հետ ճարտասիրութեան և աշխատանքի մի աշխատանքի տասնամեայ տոհուն գործունէութեան նւիրած համեստ հանդիսի անմոռանալի ժամերի անմոռանալի յիշողութիւններ...

Իւրիյ Ալէքսէեիչ Վեսելովսկու գրական և հասարակական գործունէութեան տասնամեակի հանդիսի սոյն նկարագրիս, կրճատումներով, լոյս է տեսել ս. տ. «Նոր-Դար»-ում⁸⁾:

Իոյն հանդիսի ամփոփ նկարագիրը տւել են նոյնպէս պ. հանդիսատէսը ս. տ. «Նոր-Դար»-ում՝ «Իւրիյ Վեսելովսկու տասնամեակը», և պ. հանդիսականը ս. տ. «Մշակ»-ում՝ «Նամակ Մօսկովայից»:

Ահա այդ զրութիւնները՝

ա) «Իւրիյ Վեսելովսկու տասնամեակը⁹⁾

(Նամակ Մօսկովայից)

«Յուն. 22-ին «Գոնտինենտալ» հիւրանոցում, երեկոյեան 7 ժամին, նշանակուած էր ճաշկերոյթի պատիւ համակրելի ուսուցիչի պ. Իւրիյ Վեսելովսկու գրական գործունէութեան տասնամեակի: Ճաշկերոյթը կազմել էր մի նեղ շրջան համակրողների և որպէս պատուաւոր հիւր հրաւիրուած էր յորեւեարի հայրը—պրոֆ. Ա. Ն. Վեսելովսկին: 7^{1/2} ժամին շնորհ բերեց հիւրանոց Իւրիյ Վեսելովսկին և ընդունուեցաւ բուռն ծափահարութեամբ: Հացկերոյթի ժամանակ առաջինը ողջունեց յորեւեարի նախկին ուսուցիչը և ներկայ եղողների մէջ աւագագոյնը—պ. Սմբատ Մահազիզեանը, որ նկարագրեց նրա գործունէութեան համակրելի կողմերը հայերիս համար և փափագ յայտնեց, որ նոյն եռանդով նա շարունակէ ապագայում ևս գործել: Պ. Ս. Մահազիզեանի խօսքից յետոյ կարգացուեցան հեռագրներ, ստացուած հետեւեալ տեղերից. 1) ս. էջմիածնից՝ Գէոր-

⁸⁾ Տես «Նոր-Դար», 1900 թ., № 23՝ «Իւրիյ Վեսելովսկու գրական և հասարակական գործունէութեան տասնամեակի հանդէսը»:

⁹⁾ Տես «Նոր-Դար», 1900 թ., № 21:

գեան ճեմարանից, 2) Երևանի Հայոց թեմական դպրանոցից, 3) Շուշու Հայոց թեմական դպրանոցից, 4) Հաշտարխանի Մարգարախան ընկերութիւնից, 5) Պետերբուրգի ուսանող երիտասարդութիւնից, 6) Կիւեի Հայ ուսանողներից, 7) Բագուի դրամատիքական խմբից: Թիֆլիսից ստացուել էին հեռագրներ, ի միջի պլոց, Գ. Սունդուկեանից, Պերճ Պռօշեանից, Նար-Դոս-ից, Մուրճ-ի խմբագրութիւնից: Նոր-Նախիջևանից՝ Մ. Բերբերեանից, Գ. Զուբարից, մի խումբ Հայ տիկնանցից ու օրիորդներից և մի խումբ Հայ ինտելիգենտներից, Բագուից մի երկու խումբ երիտասարդներից: Շուշուց—թեմական դպրանոցի ուսուցչական խմբից, Շուշու կանանցից, ուսանող աշակերտներից և երիտասարդութիւնից, Ս. Էջմիածնից—յարգողների մի խմբից: Կային հեռագրներ նաև Երևանից, Բաթումից, Հաշտարխանից, Արմաւիրից, Գրողայից, Պետերբուրգից և այլն:

«Տեղագրներից յետոյ պ. Կափանակեանը կարգաց Հայ ուսանողների կողմից ուղարկուած ուղերձը, ապա խօսեց իբրև յատուկ ներկայացուցիչ պ. Մկրտիչ Բարխուդարեանը Նոր-Դար-ի կողմից, յետոյ բժիշկ Շահ-Նաղարեանը, պ. Ստ. Մամիկոնեանը, պ. Ալէքսանդր Ծատուրեանն և ապա ինքը՝ յորելեարը, որը մտաբերեց իւր յիշողութիւնները Լազարեան ճեմարանի մէջ անցկացրած տարիների մասին և թէ դեռ ինչ ունի անելու աւելի մօտ ապագայում ուսանորին Հայերի հետ ծանօթացնելու համար:

«Ճառախօսներից մի քանիսն ակնարկեցին, որ ծնողները նոյնպէս գործակից են եղել որդուն, խրախուսել են նրան, մինչդեռ հակառակը կարող էր և լինել. այդ պատճառով վեր կացաւ յորելեարի հայրը՝ պրոֆ. Վեսելովսկին և շատ ուրախ ու զուարթ տրամադրութեամբ յայտնեց իւր զգացմունքները հայերի վերաբերմամբ և թէ ինքն էլ, որպէս ընդհանուր գրականութեան պատմութեան ուսուցչապետ՝ չէր կարող չհետաքրքրուել նաև հայերի գրականութեամբ և այլն:

«Ճաշկերոյթից յետոյ յորելեարին տրուեց մի ընծայ համակրողների կողմից—մի թանաքաման բոլոր արդ ու զարդով գրասեղանի համար:

«Բագուից նոյնպէս ստացուած էր ընծայ և մի քանի մասնաւոր մարդկանցից գրքեր:

«Գիշելուայ 1 ժամն էր, երբ ամենքն ուրախ տրամադրութեամբ հեռացան հիւրանոցից:

Հանգիսատես.

Մոսկուա, 23 յուն.:

բ) «Նամակ Մօսկվայից¹⁰⁾

Յունվարի 27-ին

«Մօսկվայի Նոյնտիկնաւակ կոչված առաջնակարգ հիւրանոցներից մէկում յունվարի 22-ին տեղի ունեցաւ մի համեստ հանդէս, որ մասնաւոր բնաւորութիւն կրելով հանդերձ՝ զուրկ չէր նաև հասարակական անկեղծ համակրանքի ցոյցերից: Տեղիս ինտելիգենցիային և երիտասարդ վաճառականների դասակարգին պատկանող մի խումբ գրասէր հայեր այդ օրը ճաշկերոյթով հիւրասիրեցին երիտասարդ հայագէտ Իւրիյ Վեսելովսկուն, որի անունը քաջ ծանօթ է հայ հասարակութեան և որի գրականական գործունէութեան 10-ամեակը լրացաւ անցեալ դեկտեմբերի 27-ին: Համակրողների այդ խումբն առիթից օգտվելով՝ անհրաժեշտ համարեց գէթ այդ փոքրիկ ցոյցով արտայայտել իր շնորհակալութեան զգացմունքը երիտասարդ հայասէրին, որի մատուցած ծառայութիւնները մեր կեանքին և գրականութեան նոյն իսկ այդ կարճ ժամանակամիջոցում այնքան մեծ են և գնահատելի: Ուրախայի է, որ Մօսկվայում տեղի ունեցած այդ համակրանքի արտայայտութեան միացաւ նաև հայ մամուլը, որ համակրող խմբի մասնաւոր, ընտանեկան կոչին ամենայն սիրով արձագանք տուին նաև ուրիշ տեղերի հայեր, և այդպիսով յունվարի 22-ի համեստ հանդէսը սպասածից աւելի շուք և փայլ ստացաւ:

«Ճաշկերոյթին, իբրև պատուաւոր հիւր, ներկայ էր նաև երիտասարդ հայագէտի հայրը՝ պրոֆէսոր Ա. Ն. Վեսելով-

¹⁰⁾ Տես «Մշակ», 1900 թ., № 24:

սկին, ներկայ եղողներից բանաստեղծ Ս. Շահազղեան, որպէս աւագը տարիքով և թէ հեղինակութեամբ, առաջինը ողջունեց յօբելեարին մի զգացված և իմաստալից ճառով, որն ընդունվեց երկարատև ծափահարութիւններով։ Ողջունական ճառից յետոյ, պ. Ա. Մատուրեան կարդաց զանազան տեղերից ստացված հեռագիրները, որոնց թիւը հասնում էր մօտ 40-ի։ Հեռագիրներ կային, ի միջի այլոց, Շուշիի և Երևանի հոգևոր դպրոցներից, Աստրախանի եղբայրասիրական ընկերութիւնից, Պետերբուրգի և Կիևի ուսանողութիւնից, Բագուի հայ դերասանական խմբից, Նոր-Նախիջևանի և Շուշիի հայ կանանցից, Երևանի, Բաթումի, Շուշիի և Գրոզնիի հայ երիտասարդութիւնից, Պետերբուրգի հայ վաճառական դասակարգից, Աստրախանի համակրողների մի ստուար խմբից (կանայք և տղամարդիկ), Գանձակի, Երևանի, Էջմիածնի, Արմաւիրի և Բագուի համակրող խմբերից (Բագուից նաև ընծաներ), Էջմիածնի ձեմարանի ղեկավարներից, Թիֆլիսի հայ գրագէտներից և երկու խմբագրութիւններից։ Հեռագիրների ընթերցումից յետոյ, ուսանող Ս. Քափանական կարդաց Մօսկվայի հայ ուսանողների սրտառու ռեզերձը։ Ճառեր խօսեցին պ. պ. Ս. Շահնազարեան, Ս. Քափանական, որը կարդաց նաև «Մայր-Արաքսին» յօբելեարի գեղեցիկ թարգմանութեամբ, Ս. Մամիկոնեան և Ա. Մատուրեան։ Իրրև պատասխան այդ ճառերին՝ խորը զգացված՝ երկու անգամ խօսեց երիտասարդ հայագէտը և բերանացի արտասանեց հայերէն մի բանաստեղծութիւն, որը ոգևորիչ տպաւորութիւն թողեց ներկայ եղողների վրա։ Շատ օրամիտ և գողտրիկ էր Վեսելովսկու հօր ճառը, որ նա ասեց իր կենաց բաժակը խմելուց յետոյ։ Նա մեկնարանեց, թէ ինչպէս է ինքն էլ հայաստանների շարքն ընկել, հայամէջ մտել։ Ճաշկերոյթից յետոյ երիտասարդ յօբելեարին ներկայ եղողների կողմից՝ իբրև ընծայ՝ մատուցվեց մի շքեղ թանաքաման իր բոլոր սարք ու կարգով։

Հանդիսական»¹¹⁾,

11) Ուսանելի է և մի տեսակ ճնշող տպաւորութիւն է

Դոյն այդ 1900 թւի յունւարի 22-ի հանդիսի մասին և առթիւ ես հանդիպել եմ մի քանի գրութիւնների ևս՝

«Նոր-Դար»-ին¹²⁾ գրում են Մոսկւայից.

«Ինչպէս յայտնի է, դեկտ. 27-ին լրացաւ հայ ընթերցող հասարակութեանը քաջածանօթ պ. Իւրիյ Վեսելովսկու գրական գործունէութեան տասնամեակը։ Ներկայումս Մոսկւայի մի խումբ գրասէր հայերի մէջ միտք է յղացել յունւարի 22-ին իրենց շրջանում մի համեստ հանդիսով տօնելու ուսս համակրելի երիտասարդ գրողի արգիւնաւէտ գործունէութեան այդ տասնամեակը։»

Նոյն «Նոր-Դար»-ի ս. տ. «Քրոնիկոն»-ում¹³⁾ կարդում ենք՝

«Ինչպէս Մոսկւայից հաղորդել էին մեզ, տեղական հայ գրասէր հասարակութիւնը պատրաստուում է յունւարի 22-ին տօնելու ուսս հայագէտ գրող պ. Իւրիյ Վեսելովսկու գրական գործունէութեան տասնամեակը։ Ռուս ինտելիգենցիայի և մանաւանդ գրողների մէջ պ. Վեսելովսկին գրեթէ միակ մարդն է, որ սովորել է մեր լեզուն, հետաքրքրում է մեր կեանքով և գրականութեամբ և իւր ոյժերը ներածին չափ

թողնում պ. հանդիսականի գրութիւնը, եթէ ի նկատի առնելու լինենք, որ այդ գրութեան մէջ բացակայում է որ և է ակնարկ Իւրիյ Ալ. Վեսելովսկու տասնամեակի հանդիսին «Նոր-Դար»-ի խմբագրութեան կողմից յատուկ ներկայացուցիչ նշանակելու և այդ ներկայացուցիչ ճառի մասին։ Այդ առթիւ թերևս աւելի դիւրին է ենթադրել՝ «Մշակ»-ի խմբագրութեան բարբերի երբեմն անորմալ ընթացքը (Տես իմ՝ «Մշակ»-ը [25-ամեակի առթիւ] 1896/7 թ.թ. կուսակցական պայքարը», Մոսկւա, 1900 թ.), քան՝ պ. հանդիսականի անուշագիր լինելը։ Յամենայն դէպս, կրկնում եմ, այդ փաստը՝ և՛ ուսանելի է, և՛ ճնշող...

12) Տես «Նոր Դար», 1900 թ., № 4:

13) Տես «Նոր-Դար», 1900 թ., № 8:

ծանօթացնում է իւր ցեղակիցներին մեր մտաւոր—կուլտուրական կեանքի հետ: Մեր աշխատակից պ. Մ. Բերբերեանը իւր նախորդ «Գրական ակնարկներ»-ի¹⁴⁾ մէջ արդէն տուել է այդ համակրելի ուս երիտասարդ գրողի գործունէութեան ընդհանուր պատկերը. սակայն այստեղ աւելորդ չենք համարում մի առ մի թուելու պ. Վեսելովսկու այն կապիտալ յօդուածները, որ նա իւր գրական գործունէութեան տասնամեայ շրջանում զետեղել է հայ գրականութեան գործիչների և կեանքի մասին ուս պարբերական մամուլի զանազան օրգաններում և մասնաւորապէս «Նոր-Դար»-ում: Այդ յօդուածներն են. «Հայկական բեմի պատմութիւնից», «Թիֆլիսի թատրոնը և տեղական բարբերի կոմեդիան», «Հայկական դրամայի հնագոյն շրջանը», «Մըկըրտիչ Պեշքթաշլեան», «Բայրընը ս. Ղազարի կղզում», «Հայոց մամուլի հարկերամեակը», «Հայերի վիճակը Թիւրքիայում մինչև պետութիւնների միջամտութիւնը», «Գրիբանեդով և հայերը», «Սիրոյ և եղբայրութեան քարոզիչ» (Պեշքթաշլեանի մասին), «Կնոջ վիճակը հայ գրողների երկերի մէջ», «Բացի այս յօդուածներից պ. Վեսելովսկին առանձին գրքովով հրատարակած ունի «Հայ Բելլետրիստներ» ժողովածուի առաջին հատորը պ. Մինաս Բերբերեանի աշխատակցութեամբ, «Բանաստեղծութիւնների թարգմանութիւններ» (34 հայ բանաստեղծութիւններ), «Պէպօ» Սունդուկեանցի կոմեդիայի թարգմանութիւնը: Մեր գրասէր հայրենակիցներն անշուշտ չպիտի յապաղեն օգուտ քաղել յարմար առիթից իրենց համակրանքը յայանելու ուս երիտասարդ հրապարակախօս քննադատին իւր գործունէութեան տասնամեակի օրը:»

«Տարազ»-ը¹⁵⁾, հաղորդելով յունւարի 22-ի Մոսկուայի «Համեստ հանդիսի» մասին, ուր պիտ տօնելի «յայանի գրող Իւրի Վեսելովսկու գրական գործու-

14) Տես ցածը՝ գլ. V.

15) Տես «Տարազ», 1900 թ., № 2.

նէութեան տասնամեակը», գրում է հետևեալը՝

«Իւրի Վեսելովսկին հայերին շատ լաւ յայանի է իր գրական աշխատութիւններով, որոնք վերաբերում են ըստ մեծի մասին մեր գրականութեանը, մամուլին, Կարելի է ասել, որ Ռուսիայում միակ անձնաւորութիւնն է, որ աշխատում է հայերիս մասին գեղեցիկ յօդուածներ տպագրելու ուս պարբերական թերթերում: Մենք կցանկայինք մեր կողմից, որ յարգելի վաստակաւորը հետզհետէ լրացնէր իր տեղեկութիւնները հայ նոր գրողների նկատմամբ:»

«Մուրճ»-ը¹⁶⁾, ակնարկելով, որ խմբագրութիւնը մասնակցել է «Իւրի Վեսելովսկու հայ գրականութեանը նւիրած 10-ամեայ բեղմնաւոր գործունէութեան» «Համեստ հանդիսին» վերը¹⁷⁾ բերածս հեռագրով գրում է՝

«Իւրի Վեսելովսկիյ մի բացառիկ երևոյթ է ուսաց գրականութեան մէջ հայոց գրականութեան նկատմամբ: Այդ նոյն դերը Գերմանացոց համար կատարում է Սրթուր Լայստ գերմանացի, Ֆրանսիացոց համար՝ Մինաս Չերազ և այժմ մանաւանդ Սրշակ Զօպանեան, Ռուսիայում թերևս կարելի լինէր յիշել նաև Կիւի համալսարանի պրիւատ-դոցէնտ Գրէնը, որը իւր Азия թերթի մէջ նաև հայոց նոր գրականութիւնը իւր ծրագրի մէջ ունի. բայց Վեսելովսկու գործերը ընտիր են, բուն գրագէտի վաստակներ են:»

Ապա՝ «Մուրճ»-ը, ակնարկելով, որ

«Իւրի Վեսելովսկու այդ ասպարիզի վրա գործունէութիւնը լրջօրէն սկսում է 1892 թւականից «Մրտիստ» այժմ դադարած ամսաթերթի մէջ իւր հրատարակած ուստմնասիրութիւնով՝ «Հայոց բեմի պատմութիւնից. Թիֆլիսի թատրոնը և վարքագրական կոմեդիան»,

յիշում է Իւրի Վեսելովսկու՝ հայերիս վերաբերեալ ուրիշ աշխատութիւնները՝

16) Տես «Մուրճ», 1900 թ., № 2, էջ 119—120.

17) էջ 20.

«Մ. Բերբերեանի հետ միասին հրատարակած «Հայոց Բելլետրիստներ» ժողովածուն, ուր մեր մի շարք լավագոյն նոր հեղինակներից [Արովեան, Պատկանեան, Բաֆֆի, Ազաեան, Շահազիզ¹⁸⁾] թարգմանած են կարևոր կտորներ՝ հեղինակների կենսագրական տեղեկութիւններով և նոցա երկերի քննադատական գնահատումով:»

Ապա՝ «Մուրճ»-ը բերում է Իւրիյ Ալ. Վեսելովսկու այլ ևս ուրիշ՝ Հայերիս վերաբերեալ թարգմանութիւնների և ինքնուրոյն գրւածքների ցանկը:

Եւ այն, և այն...¹⁹⁾:

Առանձնապէս ուշադրաւ են՝ պ.պ. Մինաս Բերբերեանի («Նոր-Գար», 1899 թ., № 231) և Լ.-ի («Մշակ», 1900 թ., № 9) յօդւածները: Այդ յօդւածներն արատապում եմ ցածը՝ գլ: V:

Ի գէպ ասել պ. Մ. Բերբերեանի յօդւածը (քաղւածօրէն) արատապում է Վէնայի «Հանդէս Ամսօրեայ»-ի սոյն՝ 1900 թւի № 2-րդում (էջ 60):

¹⁸⁾ «Армянские беллетристы»-ի առաջին հատորում պ. Ս. Շահ-Ազիզի մասին և նրա հեղինակութիւններից ոչինչ, կամ գրեթէ ոչինչ չկայ: Նրան, որպէս և նրա հեղինակութիւններին բաւականին ընդարձակ տեղ պիտ նւիրէր «Армянские беллетристы»-ի երկրորդ՝ պ.պ. հրատարակիչներից միանգամայն անկախ պատճառներով լոյս չտեսած հատորում:

¹⁹⁾ Իւրիյ Ալէքսէևիչ Վեսելովսկու տասնամեակի առթիւ ակնարկ կայ Պարիզում հրատարակող պ. Ա. Չոբանեանի «Անահիտ»-ում (1900) ևս:

XX.

ՅՈՒՆԻՍՐԻ 22-ԻՅ ՅԵՏՈՅ ՍՍՍՅԻԱԾ ՀԵՌԱԳՐՆԵՐԸ
ԵՒ ՆԱՄԱԿՆԵՐԸ.

Այստեղ ես կյիշեմ հետեւեալ հեռագրները՝ Երևանից մի խումբ համակրողներ յայանում են «Յոբելեար» Իւրիյ Ալ. Վեսելովսկուն իրենց «սրտագին շնորհակալութիւնը և ցանկանում են աւելի շքեղ հանդէս ապագայ 25-ամեակին»:

Մոսկւայից պ. Գրիգոր Զանշեանը²⁰⁾ «սրտագին ողջունում է իրեն այնչափ համակրելի հայասէրին»:

Ապա՝ անցնում եմ յունւարի 22-ից յետոյ ստացւած նամակներին²¹⁾: Ահա՛ այդ նամակները՝

ա) «Օրինակելի մշակ, մեր անկեղծ բարեկամ

հիՐԻՅ ՎԵՍԵԼՈՎՍԿԻՅ.

«Այն ժամանակ, երբ մեր շուրջը տիրում է միապաղաղ մշուշային սրամագրութիւն, Դուք յանձն արեցիք մի տեսակ աշխատանք, որ զարմացնում է մեզ շատերիս:

²⁰⁾ Յ. Գ.: Այսօր՝ հանգուցեալ:

²¹⁾ Բոլոր նամակները, բացի մէկից, գրւած են եղել հայերէն:

«Տասն տարի աշխատեցիք արթնացնել հետաքրքրութիւն և առողջ հայեացք դէպի մի փոքրիկ ազգ, որը իր պարտքն է համարում այժմ Ձեզ իր մտերիմը, իր բարեկամը համարել: Հաւատում ենք, որ «չարագուշակ երևոյթները» չեն ընկձիլ Ձեր եռանդը, Ձեր ուղղութիւնը և ապագայում:

«Այո՛, շատ չէ տասն տարին, բայց Դուք կարողացաք այդ կարճ ժամանակում վայելել չայոց ազգի կատարեալ բարեկամութիւնը և անկեղծ սէրը:

«Ի նշան մեր խորին երախտագիտութեան ուղարկում ենք մեր աշխատութիւններից երկու գիրք «Ղօնադրուղը մնաց» և «Կոտորված սիրտ» վերնագրերով և խնդրում ենք ընդունել սրանց իբրև մի աննշան նուէր մեր կողմից Ձեր յօրեւեանի առիթով:

«Մնամ յարգանքը՝ Ուսուցիչ Յովակիմ Սօլօվեան.

«Ղստրախան, 14 յունվարի 1900 թ.»

բ) «Մեծարգոյ պարոն հիՐԻՅ ՎԵՍԵԼՈՎՍԿԻ՛.

Ազնիւ պարոն.

«Ձեմ կամենում յարմար առիթը բաց թողնել և ամբողջ հոգևով շնորհաւորում եմ Ձեր անչափ համակրելի գրական գործունէութեան տասնամեակն. Անկարելի էր չը հիանալ կարդալով Ձեր հայերէնից Ռուսերէն թէ արձակ և թէ ոտանաւոր թարգմանութիւնները ընդհանրապէս և մասնաւորապէս հայ բեմի վերաբերմամբ Ձեր Ռուսերէն աշխատութիւնները: Սրդարեւ շատ և շատ գնահատելի է որ մեր այս եսամոյլ դարում մի մեծ ազգի զաւակ այնչափ հետաքրքրի և համակրանքով վերաբերի դէպի մի ժողովուրդ—հիւժուած և բազմաշարժար—որի գրաւիչ երգը իւր հեծկտանքն է, իսկ հրապոյրը՝ իւր վէրքերը...»

«Յանկալով Ձեզ աջողութիւն և յարատեւութիւն Ձեր ընտրած ասպարիզում,

«Մնամ միշտ ամենախորին յարգանքով

Արամ Վրոյր

«19 Յունվարի 1900 թ.,

Բագու.»

գ) «22/3 Յունուարի Heidelberg...»

«Յարգելի Պարոն,

Ազնիւ գործիչ,

«Այս ժաման ստանալով «Նոր-Դար»-ի 4 համարը, կարդալով մի մխիթարական լուր, իմացայ, որ Մոսկուայի հայերի մի խումբ այսօր, յունուարի 22-ին, պիտի տօնէ Ձեր գրական, արդիւնաւէտ գործունէութեան տասնամեակը:

«Թէպէտ և, ինչպէս լուրիցը երևում է, այսօրուայ տօնախմբութիւնը ընտանեկան բնաւորութիւն պիտի ունենայ, գուցէ և միայն Ձեր ծանօթների շրջանում: Այսու ամենայնիւ այնքան եմ զգացուած, որ թէ և անձամբ Ձեզ ծանօթ լինելու բաղդը չունեմ, և թէ նոյն իսկ Ձեր հասցէն չըզգիտեմ, բայց և այնպէս իբրև հայ շտապում եմ և ես յայտնելու Ձեզ այսօրուայ առթիւ զգացածս խորին շնորհակալութիւնս և յարգանացս ամենաջերմ հաւաստիքը, Ձեր գործունէութեան դեռ նախագաւթում, մեզ, թշուառ հայ ազգիս նուիրած մեծ ծառայութեան համար:

«Արևելեան ազգերի և գրականութեամբ հետաքրքրուող գիտնականներ ուսումնասիրում են և մեր, հայերիս, հին գրականութիւնը, պատմութիւնը, Բայց մեր նոր գրականութիւնը, որի գոյութիւնը օտար հասարակութեանը անյայտ էր, կամ թէ շատ մոլոր, աննպաստ ծանօթութիւն ունէր այդ մասին, Դուք, յարգարժան գործիչ, անյայտութիւնից հանեցիք այդ, նուիրելով Ձեր գործունէութեան մի մասը գրան:

«Իւրաքանչիւր հայ, որ ունի ազգային զգացմունքի մի կաթիլ, չի կարող երախտագէտ չըլինել Ձեզ:

«Նախանձում եմ իմ այն հայ եղբարցը և քոյրերին, որոնք բաղդ ունին այսօր անձամբ շնորհաւորելու Ձեզ, Ձեր իդէալական, ազնիւ գործունէութեան տասնամեակը:

«Խնդրում եմ, թոյլ տուէք և ինձ հեռու երկրից, գոնէ մտքով և հոգևով մասնակցելու այդ տօնախմբութեանը և ընդունեցէք ուսանողական պարզ գրչիցս արտադրուած

շնորհաւորանքը, երախտագէտ շնորհակալութիւնը և բարեմաղթութիւնը.

«Թէ տեղիս համալսարանում ուրիշ հայ ուսանող ևս լինէր անշուշտ կրմիացներ և նա իր ձայնը, դժբաղդարար այս սեմեստրին միակ հայ ուսանողուհի ես եմ տեղս.

«Այսու ընդունէք, աղնիւ Պարոն, խորին յարգանքս՝ որով Մ. Խ. Աղախին—տիկին.

Անահիտ Ոսկի.»

դ) «Սիրելի բարնկամ հիւրի՞նք ՎԵՍԵԼՈՎՍՈՎԻ.

«Թէ և շատ ուշ, բայց մեծ ուրախութեամբ իմացայ, որ Ձեր գրական տասնամեակը անցեալ յունւարի մէջ պէտք է տօնէր և յուսով եմ որ տօնել է, ես ուրախացայ նախ՝ որովհետև մի չտեսնեա՞ծ երևոյթ էր հայկական գրական կեանքում, որ մի անհատի գրական տասնամեակը այդքան սիրով և անաչառ կերպով ընդունէր, քանի որ պէտք է խոստովանել մեր ընթերցող հասարակութիւնը (?) առհասարակ զուրկ է թէ անաչառութիւնից և թէ համարձակ, լայն ու ազատ թռիչքներից, որ կարենար մի երիտասարդ գրականի գործունէութիւնը պէտքին պէս յարգել. Բայց ես ուրախացայ նոյնպէս, որովհետև այդ գրական տասնամեակը Ձերն է, սիրելի Իւրիյ, որին ես անձամբ առիթ եմ ունեցել ճանաչել.

«Եւ յիրաւի, շնորհաւորելով Ձեզ, ես աչքի առաջ ունիմ ոչ թէ միայն Ձեր այնքան գեղեցիկ թարգմանութիւնները հայ բանաստեղծներից և Ձեր իմաստալից աշխատութիւնները հայ գրականութեան մասին, այլ և այն հանգամանքը, որ Իուք գրասէր լինելով հանդերձ երբէք չէք դադարած յարգելի քաղաքացի լինելուց. դա երևում է Ձեր բոլոր գործունէութիւնից. Յուսալով Ձեզ տեսնել այս տարի ինձ մօտ Պարիզում, թոյլ տէք ինձ, բարեկամ, առայժմ ցանկալ Ձեզ առողջութիւն և սոկունութիւն, որ ապագայում ևս, ինչպէս անցեալ տասնամեակում— չ՛դադարէք անխոնջ և մեզ սիրելի գրական գործիչ լինելուց.

«Կինս և ես ուղարկում ենք Ձեզ մեր սրտագին ողջոյնները. Պինդ սեղմում եմ Ձեր ձեռքը.

Ռուբէն Բերբերեան.

«1900 թ., 12 փետր.,
Paris.»

է) ²²⁾ «Մեծապատիւ Պարոն.

«Շտապում եմ յայտնել Ձեզ ամենաջերմագին շնորհակալութիւններս՝ շնորհիւ Ռուստիպի հայրենակիցներիս այնպէս գեղեցիկ նախամտածած և ի կատար ածած յորելեանիդ առթիւ, — յորելեան, ուր գնահատութեան պիտ առնւէին Ձեր՝ շարունակ տասը տարի հայազգիների գործին աջակցող վաստակը:

«Ցաւում եմ, որ, մայրենի լեզուիդ անգիտակ լինելուս պատճառով, մինչ այսօր անկարող եմ կարգալ գրածքներիդ բնագիրը. սակայն ես կարգացել եմ հայ գրականութեան վերաբերեալ գրածքներիդ թարգմանութիւնները և թարգմանեա՞ծ քաղաքները: Ինձ քաջ յայտնի է, թէ Իուք ինչպէս ճշգրիտ ըմբռնած և գնահատած էք հայ ազգի մտաւոր և բարոյական արժանիքը, թէ՛ նպատակելով ծանօթացնել ռուս հասարակութիւնն այդ ազգի հետ՝ ի՛նչ վեհանձն կայծ էք զգալի կայուցանում՝ քննադատաբար և թարգմանաբար ուսումնասիրելիս ազգիս բուն ոգւոյն, արամադրութեանը թարգման հանդիսացած բանաստեղծներին և զեղարւեստաղէաներին:

«Երբ Թիւրքիայի թշուառ ազգակիցներս կրում էին անասանելի դաժան թշուառութիւնները, — թշուա-

²²⁾ Այս նամակը գրւած է եղել Փրանսերէն. ես այստեղ բերում եմ այն թարգմանաբար.

առութիւններ, որ գերակշռում են ամէն ինչ արձանագրած ունին պատմութեան էջերը,—մեզ աւելի քան վերաւորում էր Եւրոպայի պաշտօնական շրջանների, կարծես, նախամտածած անտարբերութիւնը, Եւրոպայի ազգութիւնների միշտ և ամենուրեք զգալի տգիտութիւնը՝ հայ ազգի պատմական դերի և արդին բնագծող փաստերին վերաբերեալ, վերջապէս, եւրոպական մամուլի որոշ մասի թշնամական, երբեմն՝ ծայրայեղ վերաւորական վերաբերմունքը դէպի չարատանջ հայաստանը:

«Իուք պատկանում էք այն բանակին, որ պաշտպան հանդիսացաւ հայ ազգին՝ ընդդէմ այդ ազգի ցաւերը կրկնապատկող, դորա վէրքերն արատաւորող և վերաւորանքների հեղինակ հանդիսացած տգիտութեան և տմարդութեան: Իուք հրապարակի վրա զրիք Բարոյական առողջ-Նի-նը, անպարտելի և ճշմարտ-դի կենսա-նական-Նի-նը — կորովը, ճշմարտութեան և կեանքի անյագելի թարաւը — կարձ՝ ամէն ինչ, որ հայ ազգը՝ չնայելով մինչ այսօր իր գլխով անցած պատուհասներին՝ անշէջ պահել է իր նիստ ու կացի և բնոյթի յատկանիշ սաղմունք, ամէն ինչ, որ պահւում — պահպանւում է նրա մէջ՝ շնորհիւ և՛ բանաստեղծների, և՛ գեղարւեստագէտների, և զգալի կերպով ցոլացնում — բնագծում է այն եռանդը, որով հայ ազգը մինչ այսօր վարում է իր ձակատամարտը՝ ընդդէմ բարբարոսութեան և անդրբուլի հաւատը՝ դէպ ազատութեան և քաղաքականութեան ապագայի յաղթանակը:

«Անշուշտ, մեր խորին շնորհակալութեան արժանի են այն բարեսէրները, որ զթաւատ օգնութեան ձեռք

մեկնեցին և ոլորմութիւն տւին մեր՝ քաղցից տառապող եղբայներին և հազարաւոր որբերին: Սակայն այն Բարոյական Դպասարը, որը Իուք և Ձեր համագործակցողները՝ կատարելով նոյն դերը՝ աւելք մեզ, պաշտպան հանդիսանալով մեր դէմ ուղղած զըպարտութեան, մեզ վերաւորող տգիտութեան,— այդ նպաստող ոչ պակաս զնահատելի է, նոյն իսկ՝ գերակշիռ: Ձեզ է պատկանում մեր անկեղծ շնորհակալքի լաւագոյն մասը, քանի որ Իուք դէմ յանդիման ելաք հայ ազգին Բարոյական ոչնչացման հարւած տալ տքնողներին,— մի հարւած, որ կրկնակի գերազանցում է գիտակցազուրկ բրտութեան նիւթական հարւածները:

«Ընդունեցէք, մեծապատիւ Պարոն և թանգագին Ընկեր, անկեղծ յարգանացս լիակատար հաւաստիքը:

Արշակ Չոբանեան.

1900 թ., փետր.,
Պարիզ:»

Գ) «I Մարտի, 1900 թ., Ստրասբուրգ.

«Ազնիւ և արգոյ բարեկամ

Պ. ՎԵՍԵԼՈՎՍԿԻՆ.

«Թոյլ տուէք ինձ՝ Ձեր նախկին ճեմարանական ընկերոջ, շնորհաւորել Ձեր գրական բեղմնաւոր գործունէութեան տանամեակը, Ձեր տանամեակի առթիւ իմ մտքիս մէջ զարթնում են անցեալի գեղեցիկ յիշատակներ, երբ ես 6-րդ դասարանի աշակերտ էի և երբ ես Մինաս Բերբերեանի հետ սկսեցի հրատարակել «Գործ» թերթը, որի մէջ Իուք Ձեր գողարիկ բանաստեղծութիւններով ամենից աւելի էիք փայլում: Տակաւին Ձեր պատանեկութեան աշա-

կերտութեան ժամանակ Դուք ցոյց էիք տալիս Ձեր տա-
ղանդը, որ ապա այնպէս զօրեղ կերպով աճեց ու գեղե-
ցիկ, հասուն պտուղներ տուաւ: Երբէք չեմ մտանալ այն
ժամանակուայ քաղցր յիշատակները:

«Կարգալով „Նոր-Դար“-ի մէջ Ձեր համեստ յօրելեանի
նկարագիրը, ես մտքով սլացայ Մոսկուա, Ձեր յօրելեանին
մասնակցողների հետ հոգեորապէս մասնակից եղայ: Տասը
տարի անխոնջ կերպով գործեցիք յօգուտ մեր թշուառ
ազգի և իւրաքանչիւր պարտաճանաչ հայ այսօր երախտա-
գիտութեամբ միայն լցուած՝ իւր խորին շնորհակալութիւնը
կարող է և պարտաւոր է մատուցանել Ձեզ:

«Թոյլ տուէք ուրեմն և ինձ, որպէս մի նուաստ հայ
թղթակցի, իմ ջերմագին համակրանքը և յարգանքը յայտ-
նել Ձեզ Ձեր տասնամեակի առթիւ և մաղթել Ձեզ տա-
կաւին շատ տասնամեակներ գործել յօգուտ ուսս և հայ
ազգերի մտաւոր զարգացման և լուսաւորութեան: Ուղար-
կում եմ Ձեզ հեռաւոր Ստրասբուրգից իմ անկեղծ, ջեր-
մաջերմ ողջոյնները:

«Կեցցէք:

«Խորին համակրանք՝

Արշակ Եգիզարեան»

Մ.

Պ.Պ. ՄԻՆԱՍ ԲԵՐԲԵՐԵԱՆԻ ԵՒ Լ.-Ի ՅՕԴԻԱՄՆԵՐԸ.

Յունւարի 22-ի հանդիսի ժամանակ ասել էի՝
«Ուրախալի է տեսնել ինչպէս զանազան ուղղու-
թիւնների տէր անհասաներ խմբում են մարդասէր
գործի շուրջը և „կեցցէ“ ներով ողջունում մարդկու-
թեան ընտիր զաւակին»²³):

Եւ ահա հէնց այդ տեսակէտից է, որ մի առան-
ձին զոհունակութիւնով արձանադրում եմ այստեղ
իր ժամանակին «Նոր-Դար»-ի և «Մշակ»-ի էջերից
հնչեցրած «կեցցէ»-ները՝ Իւրիյ Ալ. Վեսելովսկու
հասցէին:

Իւրիյ Ալէքսէեիչ Վեսելովսկու զրահան և հա-
սարակական տասնամեայ գործունէութեան յօրելեա-
նի առթիւ յիշեալ լրագրներում լոյս տեսած յօդ-
ւածներն ի նկատի ունին ամփոփ գծերով շեշտել
Իւրիյ Ալէքսէեիչ Վեսելովսկու մինչ այսօր կատա-
րածի նշանակութիւնը: Ահա ինչու կարեւոր դատեցի
կցել այստեղ այդ յօդւածները: Ասել է որ այդ
յօդւածներից պ. Մ. Բերբերեանի յօդւածը գրաւում

²³) Տես վերը, էջ 28:

է ընթերցողի առանձին ուշադրութիւնը՝ իբր բաւականի մանրադննին ուսումնասիրութիւն Իւրիյ Ալէքսէեւիչ Վեսելովսկու մինչ այս օրայ՝ տասնամեայ անցեալի: Ինչպէս վերն²⁴⁾ ասած է, պ. Մ. Բերբերեանի յօդածն իր ժամանակին Համառօտակի արտատպւած է եղել Վէնայի «Հանդէս Ամսօրեայ»-ում²⁵⁾:

Ահա այդ յօդածները:

ա) Պ. Մինաս Բերբերեանի յօդածը²⁶⁾.

«ԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿՆԵՐ

VII.

«Իւրիյ Ալ. Վեսելովսկի.—Նրա գրական գործունէութիւնը՝ վեպ. բանաստեղծութիւն. քննադատութիւն.—Վեսելովսկին և հայոց գրականութիւնը.—Նրա մեզ մատուցած ծառայութիւնները:

«1889 թուականի դեկտեմբերի 27-ին «Русскія Вѣдомости» թերթում տպուած էր Իւրիյ Վեսելովսկու*) անգրանիկ գրուածքը: «Երազ» էր այդ գեղեցիկ պատկերի վերնագիրը: որի մէջ հեղինակը նկարագրում էր ուսու բանաստեղծի մահը հեռու հայրենիքից, հարաւային Փրան-

24) Տես վերը: էջ 44:

25) Տես «Հանդէս ամսօրեայ», 1900 թ., № 2, էջ 60:

26) Տես «Նոր-Պար», 1899 թ. № 231:

*) Ի. Վեսելովսկին պրոֆ. Ալ. Նիկ. Վեսելովսկու և թարգմանչուհի՝ Ա. Ա. Վեսելովսկու որդին է: Նա այժմ 28 տարեկան է: Միջնակարգ ուսումն ստացել է Լազարեան ճեմարանում: բարձրագոյն ուսումը՝ Մուսկուայի համալսարանի լեզուագիտական բաժնում: (Մանթովսկու պ. Մ. Բերբերեանի):

սիայի հրաշալի բնութեան գրկում: Այդ օրուանից ի վեր երիտասարդ հեղինակը գարձաւ օրինաւոր գրական գործիչ: Ասում եմ՝ օրինաւոր, որովհետև դեռ աշակերտական նստարանի վրայ նա գրել է բազմաթիւ ոտանաւորներ, որոնցից շատերի բովանդակութիւնը վերցրած էր հայոց պատմութիւնից, հայ գործիչների և առհասարակ հայկական կեանքից:

«Այդ ոտանաւորները պահուած են ինձ մօտ և ցոյց են տալիս, թէ ինչպէս մի ուսու մարդ կարող է ոգևորուել մեր անցեալով և մեր անցեալը յիշելիս զգալ նոյնը, ինչ որ և մենք ենք զգում: Իւրիյ Վեսելովսկու այդ «ճեմարանական» ոտանաւորները յիշեցնում են Բայրընի ոգևորութիւնը Յունաստանի կեանքով և գործերով:

«Վերոյիշեալ «Երազ» վեպիկից յետոյ տաղանդաւոր երիտասարդը շատ բան արտադրեց և հրատարակեց:

«Ամբողջ տասը տարի է, որ նա աշխատում է գրական ասպարէզի վրայ, և այդ տասնամեայ գործունէութեան մասին է, որ ուզում եմ խօսել ես այժմ: Տարիների ընթացքում Իւրիյ Վեսելովսկին մասնակցել է՝ «Ռուսսկիա Վեդոմոստի», «Նովոստի», «Նովոե Օրոզդէնիէ», «Պրիազովսկիյ Կրայ», «L'Armenie», «Նոր-Պար» և այլ թերթերում: «Միր Բոժիյ», «Վեստնիկ Եւրոպի», «Արտիստ», «Հանդէս գրական և պատմական» և այլ հրատարակութիւնների մէջ: Նրա գրական գործունէութիւնը կարելի է երկու մասի բաժանել: մէկը՝ նուիրուած մեր, հայերիս, կեանքին և գրականութեանը: միւսը՝ ուսու և ընդհանուր գրականութեան ու կեանքին: Վերջինս էլ կարելի է բաժանել՝ վիպական, բանաստեղծական և քննադատական երկերի:

«Նրա վիպակներից ամենայաջողներն են վերոյիշեալ «Երազ»-ը, որ գրաւում է մեզ թէ իւր սրտաշարժ սիւժէով, թէ բնութեան նկարագրութիւններով և թէ գեղեցիկ ոճով: Միւսը տպուած էր անցեալ տարի և կոչւում է «Հին յիշողութիւններ»: սրա մէջ հեղինակը դուրս է բերում ուսանողական փոքրիկ շրջանում տեղի ունեցած սիրային մի դէպք: Վեպիկը գրուած է շատ նուրբ և զգացուած: Նորաւարտ համալսարանականների անջատման պատկերը, օրի-

նակ, գրուած է շատ կենդանի և ճշգրիտ: Ամբողջ գրուածքը տերերգի տպաւորութիւն է թողնում:

»Ինչ կը վերաբերի Վեսելովսկու բանաստեղծութիւններին—նրանց թիւը մեծ է: Ինքնուրոյններից յաջողուած են մի քանիսը միայն, ինչպէս, օրինակ՝ Նագսոնի յիշատակին նուիրած մեծ ոտանաւորը, որի մէջ գուրս է բերուած «տխուր երգչի» ամբողջ ներքին աշխարհը և նրա բանաստեղծութիւնների գլխաւոր մոտիւնները:

»Թարգմանական բանաստեղծութիւններ նա շատ ունի. տպուած են նրանք զանազան պարբերական հրատարակութիւններում: Անցեալ տարի նրանց մի մասը լոյս տեսաւ առանձին գրքոյով (Стихотворные переводы), որի մէջ ղետեղուած են թարգմանութիւններ հայ բանաստեղծներից, չայնէից և Իբսէնից: Ընդհանրապէս թարգմանութիւնները յաջող են և ցոյց են տալիս, որ բանաստեղծն ունի ճաշակ, և հարուստ լեզու: Կան նրանց մէջ և անյաջողներ էլ—գլխաւորապէս չայնէից:

»Սակայն Իւրիյ Վեսելովսկու գլխաւոր ասպարէզն է քննադատութիւնը: Նա, բացի ռուսերէնից, շատ լաւ իմանում է ֆրանսերէնը և գերմաներէնը. կարգում է անգլերէն, իտալերէն, հայերէն, չեխերէն և այլ լեզուներով գրուածքները:

»Տանը, համալսարանում և մատենադարաններում նա ամենայն լըջութեամբ ուսումնասիրել է ընդհանուր գրականութիւնը, այնպէս որ հեշտութեամբ կարող էր ստանալ համալսարանական դասախօսի պաշտօնը, մանաւանդ որ նա լաւ հռետոր է: Բայց մամուլի ասպարէզը, ինչպէս երևում է, նրան աւելի սիրելի է, և նա առայժմ իրեն հեռու է պահում թէ գիտական ասպարէզից և թէ շրջաններից—լիովին անձնատուր լինելով պարբերական մամուլին, որը թէպէտ չի կարող համալսարանական դասախօսութիւնների շօք վարձատրել և ապահովել, բայց տալիս է աւելի մեծ ներքին բաւականութիւն և ոյժ ունի իսկական տաղանդներին միշտ առաջ ու առաջ մղելու:

»Իրրե քննադատ նա աշխատում է երկու ուղղութեամբ և՛ իրրե գիտնական, և՛ իրրե հրապարակախօս, և՛ իրրե

րուն քննադատ-պատմարան, և՛ իրրե մատենախօս: Մի ժամանակ նա մատենախօսութիւններ էր գրում «СЕМЬЯ» շարաթաթերթում: այժմ շարաթեր երկու անգամ նրա գրախօսական և այլ քննադատական յօդուածները լոյս են տեսնում Պետերբուրգում հրատարակուող «НОВОСТИ» լրագրի բանասիրականներում: Նետեւելով այդ յօդուածներին, զարմանում ես՝ ինչպէս է կարողանում Վեսելովսկին այդքան շուտ ծանօթանալ բոլոր նոր լոյս տեսած գրքերի հետ. մանաւանդ երբ տեսնում ես, որ այդ գրքերը գրուած են լինում ֆրանսերէն, գերմաներէն կամ անգլերէն և զեռ նոր են լինում լոյս տեսած Բերլինում կամ Պարիզում: Վեսելովսկին իբրև մամուլի գործիչ, պարտաւորուած որոշ օրը հասցնելու իւր յօդուածը—ստիպուած է շտապ կարգալու և գրելու, որ և թողնում է իւր գրողին այդ յօդուածների վոյս: Բայց արդարութիւնը պահանջում է ասել, որ այդ գրախօսականի ձևով գրուած բանասիրականներից մենք իրաւունք էլ չունինք պահանջելու աւելի քան նրանք տալիս են, իսկ նրանք անշուշտ միշտ բաւականաչափ ծանօթացնում են ընթերցողին նոր լոյս տեսած (օտար լեզուով գրուած) գրքերի թէ բովանդակութեան և թէ լաւ ու վատ, թոյլ կամ շնորհալի կողմերի հետ: Լինում են գէպքեր, երբ յօդուածագիրը յափշտակուելով մի որևէ նորութիւնով կամ առանձին աժէք տալով այս կամ այն հեղինակին—ամբողջ բանասիրականը նուիրում է մի գրուածքի, մի գրքի վերլուծման: Ահա այդ ժամանակ մենք տեսնում ենք, որ Վեսելովսկին իւր հօր նման գիտէ գրաւել և հետաքրքրել ընթերցողին. գիտէ տալ նուրբ և մանրազնին քննադատութիւն: Առանձին շնորհք ունի նա գրքի բովանդակութիւնը պատմելու, որ ի հարկէ մեծ առաւելութիւն է քննադատի համար՝ ամեն մարդ չի կարող իւր խօսքերով, մի երկու սիւնակի մէջ ամփոփել ահագին վէպի բովանդակութիւնը: Իբրև մատենախօս քննադատ նա չունի այնպիսի մի ուղղութիւն, որ կարողանար մօտեցնել նրան Թեյնին, Բրանդեսին կամ Ժիւլ Լըմտրին: Վեսելովսկուն գլխաւորապէս զբաղեցնում է գրուածքի գեղարուեստական

կողմը: Միայն այն դէպքում, երբ հեղինակը գեղարուեստորէն է զարգացրել իւր սիւժէն—նա իրաւունք ունի բելլէտորիստ կոչուելու: Ամենագեղեցիկ գաղափար արծարծող գրուածքն անգամ, երբ նա զուրկ է գեղարուեստական արժանիքներից, Վեսելովսկու կարծիքով բելլետորիստիկա չէ, վէպ կամ բանաստեղծութիւն չէ:

Իւրիչ Վեսելովսկին շատ անգամ այն աստիճան յափըշտակուում է գեղարուեստական կոմպոզիցիայով (գործով), որ մոռանում է գաղափարին արժանավայել ուշադրութիւն դարձնել: Բայց այդ ի հարկէ բացառիկ երևոյթ է: Նրա գրադատական յօդուածներից արժանի են ուշադրութեան Իոդէի, Զոլայի, Շպիլհագէնի վէպերի մասին գրածները, Աւելի լուրջ յօդուածներ են՝ Անդրէ Շենիէի, Զ. Լէօպարդու, Ն. Նայնէի և այլ մի քանի բանաստեղծների «բնագծերը»: սրանց արժանաւորութիւնն այն բանումն է, որ գրուած են միաժամանակ և շատ լուրջ և շատ դիւրամտօղջելի: Իւրիչ Վեսելովսկին այս յօդուածներում ցոյց է տալիս քննադատական օրինաւոր տաղանդ և թեմաների բազմակողմանի ուսումնասիրութիւն: Մեծ նշանակութիւն ունի և այն, որ յօդուածագիրը թէ Նայնէի, թէ Շենիէի և թէ Լէօպարդու գրուածքների բնագիրն է ուսումնասիրել, որ կարող է անել միայն Վեսելովսկու նման լեզուները իմացողը:

Վերջապէս երիտասարդ հեղինակի՝ «Ֆ. Վելտն», «Ժ. Ռասին», «Կնեաժնին», «Ռոդենրախ» և այլ յօդուածներն արդէն գիտնական գրուածքներ են, պատմա-քննադատական հետազոտութիւններ, որ արժանի են ամենալուրջ ուշադրութեան: Սրանց թուին պէտք է դասել և «Զ. Լէօպարդի» վերնագրով հեղինակի երկրորդ յօդուածն այդ բանաստեղծի մասին, որ տպուած էր «Вѣстникъ Европы» — ուսաց ամենալուրջ ամսագրում: Այստեղ Վեսելովսկին փայլում է արդէն թէ իւր գեղեցիկ գրելու շնորհքով և թէ լայն էրուզիցիայով: Բացի այս բոլորից Վեսելովսկին զանազան թերթերում գետեղել է մեծ և փոքր յօդուածներ, ակնարկներ, ուսումնասիրութիւններ և այլն՝ վերաբերեալ զանազան պատմական երևոյթների կամ արդի

կեանքի և գրականութեան: Սրանց թուին են պատկանում «Երկու սալոն», «Կանանց հարցը», «Ժողովրդական զուարճութիւններ Եւրոպայում» և այլն:

Բայց՝ որ ամենից աւելի գնահատելի է երիտասարդ գրողի գործունէութեան մէջ, դա նրա հայասիրութիւնն է անշուշտ: Այսինքն ամենից աւելի գնահատելին ինձ, ձեզ և առհասարակ հայերի համար:

